

449

8

U-23

on km on km
m m m m

1822 ԺՈՂՈՂՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 19 MAY 2005

(Պատմաձայն իրական կեանքից) 10 8 OCT 2009

83
Մ-23 ՍԿ
ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ.

ԲԵՐԱՆԺԷԻ ԿԵԱՆՔԻՑ.

ԲԱՅՐՈՆԻ ՁՈՒՆԸ.

Թարգմանութ. ռուսերէնից

Մ. Ա.

Материнск. любовь.—Изъ жизни Беранже.—Бэйронъ и своя собака.

ПЕРЕВ. СЪ РУССК. М. А.

Բազու, տպարան „ՏՐՈՒԴ“

Баку, типогр. „ТРУДЪ“

1912.

1002
5241

24 JUN 2013

449



ՄԱՅՐԱԿԱՆ ՍԵՐ

1783 թուականին, Սիկիլիա կղզում տեղի ունեցաւ զարհուրելի երկրաշարժ, որից գեղեցիկ ու վաճառաշահ Մեսսինա քաղաքը սաստիկ վնասուեց:

Այդ զարհուրելի երկրաշարժը սկսուեց միանգամայն անսպասելի կերպով: Ամբողջ գետինը դողում էր ինչպէս մի կենդանի էակ, բարձրանում և իջնում էր: Նրա խորքերից լսւում էին մարդու վրայ սոսկում բերող ինչ-որ աղմուկի, ճալթիւնի, որոտման և հեկեկանքի խառնիճաղանջ ձայներ: Ճիշտ այդ ժամանակ բարձրացաւ սաստիկ փոթորիկ. ծովի ալիքները լեռնանում էին և կատաղի մռնչիւններով զարնւում ապառաժոտ ափերին ու ջախջախւում էին: Այդ բոլորի վրայ աւելացրէք նաև խորտակուող տների ճարճատիւններն ու զղրդիւնները:

Մարդիկ վազվզում էին փողոցներում չուսահատ աղաղակներով, թաւալում էին փլատակուող տների բեկորների տակ, տալիս էին իրենց վերջին շունչն և կամ սրտաճմլիկ կերպով հեծկլտում, չկարողանալով դուրս սողալ իրենց վրայ թափուող փլատակ-

ների տակից: Այս բոլորը միասին վերցրած, մի այնպիսի սոսկալի պատկեր էր ներկայացնում, որ դժուար էր նկարագրել:

Երկրաշարժը սկսուելուց առաջ, զգացուում էին ինչ-ինչ նշաններ, որոնցով աւելի փորձառու մարդիկ նախազուշակում էին գալիք չարիքը, սակայն, ինչպէս շատ անգամ, շատ քչերն էին հաւատում նրանց խօսքերին և ձեռք չէին առնում նախազգուշական ոչ մի միջոց, բացի միքանիներից, որոնք ժամ առաջ հեռացել էին քաղաքից:

Ստորերկրեայ առաջին հարուածից, գետնի առաջին երերումից լետով, ո՞վ որ կարողացաւ, դուրս փախաւ թափթփուող քարերից չջախջախուելու համար: Սակայն հարուածներն այնքան արագ էին իրարու լաջորդում, որ շատ-շատերը սպանւում էին անխտիր թէ տներում և թէ փողոցներում:

Ընդհանուր սարսափն այնքան մէծ էր, որ մարդիկ բոլորովին կորցրել էին իրենց խելքն ու միտքը. կարեկցութեան զգացումը, կարծէք, նրանց մէջ բոլորովին մեռել էր. նրանք ուշադրութիւն անգամ չէին ուզում դարձնել մահամերձ ընկածների վրայ. ամեն մարդ մտածում էր միայն իր մասին, չէր երևում մէկը, որ ընկածին ձեռք մեկնէր և կամ ճմլուողներին աւերակների տակից դուրս քաշել ցանկանար: Ամենքը փախչում էին խելացնոր հապճեպով, ամենքի էլ միակ մտածութիւնն էր, որքան կարելի շուտով քաղաքից դուրս

փախչել: Հայրերը մոռացել էին իրենց զաւակներին, մայրերն՝ իրենց աղջկերանց և զաւակները չէլ անգամ չէին ուզում իրենց ծնողներին:

Մեսսինայի ամենաառաջին փողոցում կանգնած էր հրաշալի պալատը մարկիզ Սպադարի, որն ամբողջ կղզու ամենահարուստներից մինն էր:

Անբաւ էր նրա հարստութիւնը, նրա կինը նշանաւոր գեղեցիկուհիներից մինն էր, մատաղատի ու բարեսիրտ: Մարկիզի երկու տարեկան որդին լրացնում էր իր հօր երջանկութիւնը. թւում էր, թէ դրանից աւելին չէր էլ ցանկանայ նա:

Ինչպէս միւս սիկիլիացիները, մարկիզն ևս արդէն ծանօթ էր երկրաշարժի բոլոր հետեանքներին: Սիկիլիայի Խանա և Իտալիայի Վեզով հրաբուխներից մօտ գտնուելով, այդ քաղաքում երկրաշարժի դէպքեր խիստ յաճախ էին տեղի ունենում: Երբ շարժերը թուլ էին լինում, նրանց վրայ առանձին ուշադրութիւն չէին դարձնում, բայց երբ, ընդհակառակը, առաջին հարուածներն այնքան սոսկալի էին լինում, որքան 1783 թուականին ամբողջ կղզին դրդեցնող ցնցումները,—արդէն ամենքը հասկանում էին, որ պէտք է վախենալ, և այդ ժամանակ ամենքի էլ մտածութեան առարկան մի բան էր լինում,—դուրս փախչել քաղաքից:

Երկրաշարժի չարաբաստիկ օրը մարկիզ Սպադարան նստած էր իր կնոջ առանձնասենեակում,

խոսկ պատկից սենեակում քնած էր նրանց որդին։ Իտալացիները համարեա ամենքն էլ որոշ չափով ծանօթ են նուազածութեան, այդ պատճառով այլ և կին միտաեղ սովորում էին ինչ-որ մի գուէտ տաւիղի ընկերակցութեամբ, որն ածում էր մարկիզուհիին։

Յանկարծ տուներ սկսեց դողդողալ և ծանր հեծեծել ստորերկրեայ սոսկալի ցնցման ազդեցութեան տակ։ Առաջին հետեցին երկրորդ, երրորդ հարուածները։ Հէնց իմանաս, պատերը քարուքանդ էին լինում, դռներն իրենք իրենց փակում էին, սեղանները, աթոռները, գրադարակներն ու պահարանները գլորւում էին գետին, հայելիներն ու պատկերները, պատերից պոկոտուելով, ահագին դղրդիւնով խորտակւում էին յատակի վրայ, պատուհանի ապակիները փշուր-փշուր էին լինում, յատակն ու սառստաղը ճարճատում էին։

Փողոցում և տան մէջ բարձրացաւ լուսահատական աղաղակ. «երկրաշարժ, երկրաշարժ... Պալատի բոլոր ծառաները լեղապատառ թափուեցին դուրս։

— Երկրաշարժ, — բացականչեց մարկիզուհին և անզգայացած ընկաւ գետին։

— Երկրաշարժ, — կրկնեց մարկիզն և ահուգողով վեր թռաւ տեղից։ Նրա գէմքը մեռեալի գոյն էր ստացել և նա, կարծես, քարացել էր, ոչ ձեռքն էր կարողանում շարժել, ոչ ոտքը։ Երկրի

խորքից անդադար լսւում էին սոսկալի աղաղակներ, և կրկնուող ցնցումները նրան ուշքի բերին։ Նա աչքը ձգեց իր անշնչացած կնոջ վրայ և նրա գըլխում մի միտք ծագեց. «հարկաւոր է ազատուել, պէտք է մարկիզուհուն ազատել»։ Որդուն մոռացել էր։

Յուսահատական ճիգով իր ուսերի վրայ ձգեց կնոջ մարմինն և պալատի սանդուխներով, տարուբերուող ծուխի միջով վազէվազ դիմեց դէպի ներքե։

— Ո՛ւր փախել, — ինքն իրեն հարցնում էր նա և, խառնուփնթոր մտքերով պաշարուած, կանգ է առնում փողոցի մէջտեղում։ Այդ րոպէին մի մարդ վազում է նրա մօտով, ճանաչում է մարկիզին, որովհետեւ վերջինս արգելք էր դռնում նրա անցնելուն, և աղաղակում է. «նաւահանգիստ, նաւահանգիստ։ Ինչ ես սառել մնացել, երբ երկիրը կուլ տալ է ուզում, երեւի ջուրը կազատի։ Մեռնե՛լ, աւելի լաւ է խիզամահ լինել, քան փլատակների տակ սատակել»։

Մարդը սլացաւ անցաւ նրա մօտով։ Նրա խօսքերն ուշքի բերին մարկիզին և ինքն ևս սկսեց վազել այն կողմը, դէպի նաւահանգիստ, այնտեղ իր փրկութիւնը գտնելու համար։ Այնտեղ կանգնած էր մեծ զբօսանաւ. նրա վրայ տեղ շատ կար։

Մեսսինայի ամեն մի հարուստ ունէր իր սե-

փական խոշոր նաւակն և կամ փոքրիկ առագաստաւոր զբօսանաւը, որոնցով նրանք շրջում էին գէղեցկատեսիլ Միջերկրական ծովի վրայ՝ նարնջի ու կիտրոնի ծաղկազարդ ծառերից անուշահոտ բուրմունքներ սփռող կղզիների ղովասուն օդը վայելելու համար։ Մինչև այդ ըոպէն ծովը մարկիզին ծառայել էր որպէս զբօսավայր, իսկ այժմ նա այնտեղ փնտռում էր իր փրկութիւնը։ Նա իր քայլերն արագացրեց դէպի ծովը։

Գետինը՝ առաջին ցնցումներից յետոյ, գեռևս շարունակում էր երերալ, և նրա տակը խտացած գոլորշիների զարհուրելի ոյժն առաջ էր բերում սոսկալի ուռնոց ու հեծկլտանք, նման ստորերկրեայ, հեռաւոր որոտի բեկբեկումներին։ Սիկիլիացիներին շատ լաւ յայտնի է, որ երբ երկրաշարժը սկսւում է ուժեղ ցնցումներով, որոնց հետևում է ստորերկրեայ աղմուկ և շարժը շարունակւում է,—այդ նշան է, թէ դա սկիզբն է սոսկալի աղէտի, տեղի են ունենալու նորանոր հարուածներ և թէ երկրաշարժը կարող է տևել բաւական երկայն։

Ահա այդ երևույթներն էին, որ այդ անգամ Մեսսինայի անբախտ բնակիչներին սոսկումով համակել էին, և ամենքն էլ գլուխները կորցրած վազում էին դէպի ծովը, բաց երկնքի տակ։ Մարկիզը նոյնպէս շտապում էր, սակայն նրա ուսերի վրայ ընկած անսովոր ծանրութիւնը դանդաղեցնում էր նրա քայլերը։ Ուրիշ որևիցէ պարագայի

տակ, գուցէ նա չկարողանար իր կնոջը շալակած մանածել իր պալատի սենեակները, սակայն այդ ըոպէին յուսահատութեան ու մահուան սարսուռը նրա ոյժերը կրկնապատկել էր, նա արիւն քափն էր մտել, նրա ծնկները կտրւում էին, սակայն նա շարունակում էր իր ճանապարհը։

Տէր Աստուած։ Ի՞նչպիսի սոսկալի ճանապարհներով պէտք է անցնէր նա։ Այդքանը բաւական չէր, հապա գետնի տակից դուրս հոսող ծծմբային գոլորշիները նրա շնչառութիւնը բոլորովին դժուարացնում էին։ Շատ տներ արդէն քարուքանդ էին եղել և իրենց փլատակներով փողոցներն անանցանելի դարձրել։ Երկրի տատանումները գեռևս շարունակւում էին և շատ տներ երերում էին ու ամեն մի ըոպէ խորտակուելու սպառնում։ Մարկիզը, գերբնական ճիգ դործ դնելով, հարկադրուած էր աւերակների վրայով մոզլցել և կամ ցաքցրիւ ընկած քարերի միջով ոլորապտոյտ շրջաններ կատարել։ Երբեմն հարկ էր լինում կանգ առնել, այս ու այն պատի խորտակուելուն և կամ բարձրացած փոշին փոքր ինչ նստելուն սպասելու համար, որպէսզի կարելի լինէր ոտքի տակը տեսնել։ Բոպէ առ ըոպէ վտանգն աւելի մեծանում էր, երկրի տատանումը հետզհետէ աւելի ու աւելի էր սաստկանում, շէնքերի փլատակումը շտատանում էր և յուսակտուր փախչողների սոսկալի աղաղակներն երթալով ուժեղանում էին։

Փլատակների տակից երբեմն լսում էին կենդանի թաղումների հեծեծանքներն և կամ վիրաւորուածների յուսահատական աղաղակները: Ամեն քալրափոխում ընկած էին դիակներ. աւելի առաջ գնալու անկարողները կախ էին ընկնում նրա փշերից և այդպիսով դանդաղեցնում նրա քալրերը: Յոգնութիւնից նա այս ու այն կոմն էր երերւում, և այդ բոլոր սարսափները տեսնելուց նրա գլուխը սկսել էր դառնալ, մազերը տնկուել էին: Նա յուսահատօրէն դուրս էր պրծնում այն թշուառների ձեռքից, որոնք կռոււում էին նրանից, և շտապում էր մահից աւելի ու աւելի հեռանալ: Նրա ուղեղը դադարել էր գործելուց, իր բնագդն էր միայն, որ մղում էր նրան դէպի առաջ, դէպի ծովը: Նրա ամբողջ հոգին համակուած էր միմիայն մի մտքով. «շուտ, որքան կարելի է շուտ»... հարուածն ամեն ընդէ կարող է կրկնուել և ես չեմ կարողանալ ազատուել»:

Նա բոլորովին ուժասպառ էր եղել, ոտքերը ծալւում էին. նրան թւում էր, թէ ահա գլորուելու է գետին և տեղնուտեղը հոգին աւանդելու: Նա լարեց իր բոլոր ուժերը, որպէսզի չըգլորուի և մի կերպ կարողանայ մինչև նաւահանգիստ հասնել:

Նրա առաջ ընկած էր մի ուղիղ փողոց, որը վերջանում էր ծովով: Նա արդէն երևում էր, սակայն փրփրադէզ, ճերմակ ալիքները տակն ու

վրայ էին լինում նրա մակերևութի վրայ և, իրաւունք զարնուելով, մանր ու խոշոր շիթերով ջարդուփշուր լինում. քամին և ստորերկրեայ անձանօթ ուժերը փոթորկում ու փրփրեցնում էին ծովի ջրերը: Ուրիշ որևիցէ ժամանակ ոչ ոքի մտքից անգամ չէր անցնի նաւահանգստից մի քալլ իսկ անելու, սակայն այժմ ամենքն իրենց փրկութիւնը փնտռում էին ծովի ալիքների մէջ և շտապում էին դէպի ծովը:

Ոտքերը հրաժարւում էին ծառայելուց, մարկիզը հարբածի նման այս ու այն կողմն էր երերւում, բայց նա մի անգամ ևս աշխատում էր իր մահացուցիչ յոգնութեան յաղթել: Հաւաքում է իր վերջին ուժերը, պատռում, անցնում է խիտ առ խիտ կանգնած ամբոխն և վազէվազ դիմում է դէպի ծովեզրեայ փողոցը: Նրա աչքի առաջ կրտրատում էր իր զբօսանաւը, ալիքները նրան շարժում էին դէպի եզերք, փրկութիւնը մօտեցել էր, բայց անբախտն այլևս անկարող էր մի քալլ անգամ առաջանալու և իր կրկնակի բեռան ամբողջ ծանրութեամբ խորտակուեց գետին և ուշագնաց եղաւ:

Մարկիզուհին հետզհետէ արդեօք ուշքի եկաւ, թէ ընկնելու ժամանակ զգացած սաստիկ ցաւից, դժուար է ասել, միայն թէ նրա աչքերը բացուեցին, իր շուրջը նայեց, անգիտակցօրէն աչքերը ձգեց իրեն շրջապատող մարդկանց վրայ, ապա

հայեացքն ուղղեց իր ամուսնուն, որ մեռածի նման ընկած էր իր կողքին, և յուսահատական հեծկըլտանքով վազեց դէպի նա. „նա մեռաւ: Մեռաւ: Մեռաւ“:

Մօտերը գտնուող մի կին, ի գուլթ շարժուելով այդ տեսարանից, կռացաւ դէպի նա, լետ քաշեց նրան ու ասաց. „Ոչ նա կենդանի է, միայն ուշաթափ է եղած, մի նեղացնէք նրան, նա ինքն իրեն ուշքի կգայ. դուք ինքներդ միւսնոյն դրութեան մէջ էիք, երբ նա քարշ էր տալիս ձեզ դէպի այստեղ: Ինչպէս երևում է, երկիւղից ու յոգնութիւնից նա ուշագնաց է եղել: Հեռացէք նրա մօտից, թող տուէք ազատօրէն շնչելու. նա կզարթնի“:

Այս խօսքերը մարկիզուհուն փոքր ինչ հանգստացրին. նա ստիքի ելաւ, բայց հէնց այդ րոպէին նրա միտքն ընկաւ իր որդին. նա վեր թռաւ, ահաբեկուած նայեց իր շուրջը, սկսեց աչքերով փնտռել նրան և յանկարծ սրտաճմլիկ ձայնով գոռաց. „Որդիս, ո՛ւր է որդիս: Նրան չեմ տեսնում: Ասացէք, ո՛ւր է նա“:

— Միթէ որդի ունէք,—հարցրեց միւսնոյն կինը:—Եթէ իրօք ունէք, ես չգիտեմ, թէ ո՛ւր է նա: Ես նրան չտեսայ ձեզ և իր հօր հետ, գուցէ լետ է մնացել: Զեր ամուսնու հետ ուրիշ ոչ ոք չկար: Ուրիշ ոչ ոք չտեսայ,—կրկնում էր կինը:

— Աստուծո՛ւմ իմ: Նա մնացել է այնտեղ,—

գերմարդկային և զարհուրելի ձայնով բացականչեց մարկիզուհին երկրորդ անգամ: Նրա ձայնը վշտի, յուսահատութեան և մայրական սիրոյ տանջանքի խառնիճաղանջ մի զանգուած էր: Նրա այդ աղիողորմ ձայնը թափանցեց մարկիզի սրտի խորքը: Նա բացեց իր աչքերը, կրթնեց արմուկի վրայ, հազիւ կարողացաւ կնոջ փեշից բռնել և մարած ձայնով ասաց նրան.—Ի՞նչ մեռածի նման ընկած էիր իմ առաջս, ես միայն քեզ կարողացայ բարձրացնել, քաղաքից դուրս հանեցի, իսկ որդիս միտքս չեկաւ: Մեր մարդկանցից ոչ ոքին չեմ տեսել, եթէ տեսած լինէի, նա էլ միտքս կընկնէր և մէկն ու մէկին կյանձնարարէի տնից դուրս բերել նրան: Ո՛հ, զթութիւն,—աւելացրեց նա, դառնալով շրջապատողներին,—ազատեցէք որդուս, ես մարկիզ Սպադարան եմ, ես հարուստ եմ, պատրաստ եմ հարստութեանս կէսը տալու նրան, ո՞վ որ երեխայիս կվերադարձնի ինձ: Ես ինքս անկարող եմ, իմ մէջ ոյժ չէ մնացել այլևս, ո՛հ, ազատեցէք նրան: Եւ արտասուքը կաթկթում էր կիսակենդան և ուժասպառ եղած մարկիզի մեռելատիպ դէմքից:

— Ա՛հ, իսկոյն երևում է, որ դու մայր չես, —բացականչեց մարկիզուհին, խլելով նրա ձեռքեց իր հագուստի փեշերը, որոնցից պինդ բռնած ունէր մարկիզն և վազեց դէպի առաջ:

— Ի սէր Աստուծոյ հանգիստ մնացիր: Նրան

ազատել անկարելի է: Աղաչում եմ, պաղատում եմ, հանգիստ մնացիր տեղդ: Մի գնա, իզուր տեղը կորստի կմատնես քեզ, իսկ ազատել նրան դու չես կարող:

Նրա աղիողորմ հեծեծանքը մի բույլ է նրան կանգնեցրեց, խանդադատանքով ու կսկիծով նայեց ամուսնու վրայ, որը մեռեալի նման ընկած էր գետին, սակայն յետ չկեցաւ իր մտադրութիւնից, ընդհակառակը, դիմեց դէպի քաղաք, ընդառաջ գնալով լեղապատառ դուրս փախչողներին: Նա ոչ թէ վազում, այլ թռչում էր, նրա ոտքերի ծայրերը հազիւ էին տափին գիպչում: Նրա արձակուած մաղերը ծփում էին քամուց: Նա արդէն անյայտացել էր քաղաքի դռների ետևը:

„Կանգնեցրէ՛ք այդ կնոջ“, գոռում էին նրա ետևից: „Նա խելագարուել է, քաղաք է վազում, իսկ այնտեղ մահ է տիրում“: Հանդիպողներից ոմանք աշխատում էին նրան կանգնեցնել, բայց նա ամենքին հրում էր և շտապում դէպի առաջ: Նրա ընթացքն ոչ մի բան չէր կարող կասեցնել: Նա ճշգրիտ հայեացքով առաջուց որոշում է իր ճանապարհը, ցածքում էր քարերի, գերանների և մոխրի վրայով: Նրան քարշում, տանում էր կնոջ սրտի ամենազօրեղ զգացմունքը — մայրական սէրը:

Նրա աչքին միայն իր երեխայի օրօրոցն էր երևում և նրա միտքը ամբողջովին իր փոքրիկով էր զբաղուած: Արտաքին ոչ մի տալաւորութիւն

չէր ազդում նրա վրայ. նրա ականջին չէին հասնում վիրաւորուածների ու մեռնողների սրտաճըմ-լիկ աղաղակները: Նա չէր նկատում, որ երկրի տատանումը նրա ամեն մի քայլափոխում աւելի սաստկանում էր, չէր կարողանում նախատեսել ստորերկրեայ նորանոր հարուածները: Նրան միանգամայն անլսելի էին երկրի խորքից լսուող որոտումները, որոնք նման էին երկաթի հաստ շերտերի իրարու վրայ ընկնելուց առաջացած աղմուկին և կամ իբր թէ մէկը հսկայական գնդեր գլորելիս լինէր տախտակէ մակերևոյթի վրայով: Սակայն նա առաջանում էր անդուլ անդադար: Ըստ երևոյթին նա չէր էլ մտածում իր հետևելիք ճանապարհի մասին, բայց և այնպէս չէր մոլորում և բնազդամբ վազում էր ամենակտրուկ սղողութեամբ: Ահա նա արդէն կանգնած էր նոյն եկեղեցու առաջ, ուր միշտ աղօթել էր. սակայն նրա զանգակատունն արդէն խորտակուել էր և իր աւերակներով ծածկել շուրջը գտնուած տները, իսկ ինքն եկեղեցին վերից վար ծռուել էր և կարող էր ամեն մի բույլէ զլորուել:

„Աստուած իմ, ոյժ ու կարողութիւն տուր ինձ իմ Ալլիոնսիս ազատելու“, բացականչում էր նա:

„Միայն մի փոքր է մնացել, բոլորովին մոտեցել եմ: Բայց կանգնւն է արդեօք տունը“: Մէկը միւսից աւելի զարհուրելի մտքերը խնւնում

էին նրա գլխում, սիրտը սաստիկ բաբախում էր, շունչը ուժգնապէս դուրս էր փախչում նրա կէսաբաց շրթունքներից, սակայն նա վազում էր նոյնքան արագ, որքան սկզբում: Ոչ մի արգելք նրան կանգնեցնել չէր կարողանում: Նա ծռուեց գէպի վերջին փողոցը, ուր իրենց մարմարեայ պալատը հսկայապէս բարձրանում էր նրա առաջ միանգամայն անվնաս. երկրաշարժը չէր կարողացել խախտել նրան:

Տարաբաղդ մօր սիրտն ուրախութիւնից կրճկուեց, իսկ լետոյ սկսեց այնպէս ուժգին բաբախել, կարծես ուզում էր դուրս թռչել: «Աստուած իմ, օգնիր ինձ երեխայիս գտնելու, իսկ նրանից լետոյ՝ վարուիր այնպէս, ինչպէս քո կամքն է»:

Խորտակուած տների վառարանների մէջ վառուող կրակից առաջացել էր հրդեհ՝ և հետզհետէ տարածւում էր աւելի ու աւելի հեռու: Պալատին կից եղող տների մնացորդներն ընկղմուած էին բոցերի մէջ. կրակը արդէն անցել էր պալատին, ծուխը քուլա-քուլա բարձրանում էր նրա տանիքից, պատուհանների շրջանակները սկսել էին վառուել: Քամին ղողանջում էր, ամեն ինչ կոտրատում և հրդեհը տարածւում էր հեռու-հեռու. այն, ինչ որ չէր աւերել երկրաշարժը, լափում էին բոցերը:

Մարկիզուհին հրդեհը չէր նկատում, չէր տեսնում, որ բոցերը պաշարել էին իր ապարանքը: Նա վազեց, մտաւ բաց դռնով ներս, և մարմարեայ

սանդուխներով սկսեց բարձրանալ գէպի վեր: Առանց մի րոպէ կանգ առնելու, սլացաւ սենեակից սենեակ, որոնց յատակների վրայ թափթփուած էր թանկագին կահկարասիքը: Նա ոչինչ չէր տեսնում, ամեն ինչ կոխոտում անցնում էր առաջ և իր հոգու ամբողջ զօրութեամբ զիմում էր այնտեղ, ուր հանդչում էր նրա երջանկութիւնը, սրտի բերկրանքը, նրա որդին: Դէպի մանկական սենեակը տանող դուռը չէր բացւում, մայրը լեզապատառ բաց է անում այն: Նրա առաջ, սենեակի մէջտեղում կեցած էր երեխայի օրօրոցը, ինչպէս առաջ եղել էր, միայն թէ երկրի տատանումներից սաստիկ երերւում էր այն: Մայրը նետւում է գէպի նա և տեսնում է, որ որդին՝ երկրաշարժի օրօրումների ազդեցութեան տակ քնած է: Սրտի ուրախութիւնից ազդակում է, մանուկը բաց է անում աչքերն և ժպիտն երեսին, քնաթաթախ ձեռքերն երկարացնում է գէպի մայրը: Նա վերցնում է նրան և սեղմում ալէկոծուած կրծքին: Նոյն րոպէին աչքերը բարձրացնում է գէպի երկինք լի երախտագիտութեամբ, շրթունքների արանքից ինչ-որ աղօթք է մրմնջում և ապա ըշտապում է գէպի դուրս ալդ սոսկալի տնից, որ մի ժամանակ այնքան սիրելի էր իրեն:

Հէնց այդ րոպէին ստորերկրեայ որոտն աւելի ուժեղ որոտաց և հարուածի սաստկութիւնից երկիրը դրդեց, յատակներն ու պատերը սկսեցին

1002
5941

տարուբերուել: Մարկիզուհին սոսկումով համակուած թռչում էր դէպի ծանօթ մարմարեայ սանդուխը, բայց հենց սր ուղեց ոտքը դնել նրա առաջին առտիճանի վրայ, սոսկալի դղրդիւնով փլատակուեց նա և լուսափայլ անդունդից սկսուեց բարձրանալ թանձր ծուխ ու փոշու սիւները գալարգալար էին լինում:

Մարկիզուհին՝ սաստիկ թափով վազած ժամանակ՝ քիչ էր մնացել, որ անդունդը գլորուէր, սակայն ժամանակին յետ կեցաւ և նետուեց դէպի միւս սանդուխը: Դուրս տանող անցքերը միջանի հատ էին, և ահա նա կանգնած էր երկրորդ անցքի առաջ, սակայն դա էլ խորտակուած էր: Մահուան սարսուռը պաշարեց նրան, նա չէր իմանում, ուր դառնար. իսկոյն միտքն է ընկնում, որ մի երրորդ անցք ևս կայ: Նա նետուում է դէպի ինչ-որ նեղ ու երկայն միջանցք, որի ծայրում, պատի մէջ կար հիւսածոյ նեղ սանդուխ. նա տանում էր դէպի ստորին յարկը: Նա վազում էր լուսակտուր արագութեամբ և մանուկին դողդողալով սեղմում էր իր կրծքին: Նրա հեռանալուց անմիջապէս յետոյ, առաստաղները թափուում են և պատերը տարուբերւում են աւելի ուժեղ կերպով: Հազիւ էր նա ստորին յարկն իջել և հասել դէպի տերրասը նայող պատուհանը, մի նոր ցնցում ամբողջ երկիրը դղրդեցրեց և թռւում էր, թէ նա պատառ պատառ էր լինում: Առաստաղներն ու տանիքները խորտակ-

ուեցին և նախկին հոյակապ ապարանքն աւերակների կոլտերի էր վերածուել:

Թշուառ մայրը հազիւ մի կերպ ինքն իրեն կարողացաւ ձգել պատուհանը: Յաճ թափուող կարնիզից պոկուած քարի մի կտոր ընկնււ նրա գլխին, որի պատառուածքից հոսած առատ արիւնով դէմքը կարմրեց, բայց նա, առանց ուշաբերուելու և որևիցէ ցաւ զգալու, վազում էր բակի միջով և լսում էր, թէ ինչպէս իր ետեւից ամեն ինչ քարուքանդ էր լինում: Նա զգաց, որ երկիրն ալիքի նման ցածանում ու բարձրանում էր. հազիւ հազ կարողացաւ բակի մէջտեղում գտնուող լճակի եզերքը հասնել և նա բոլորովին ուշաթափ թաւալեց գետին:

Թէ որքան ժամանակ այդ վիճակի մէջ մնաց — յայտնի չէ, բայց երբ ուշքի եկաւ, առաջին բանը, որ նրան սաստիկ զարմանք պատճառեց, — դա երեխայի լացն էր: Աչքերը բանալուն պէս, տեսաւ, որ վար ընկած ժամանակ երեխային այնպէս տափին էր սեղմել, որ նա, չկարողանալով ազատուել մօր տակից, սկսել էր լաց լինել, որովհետեւ ամբողջ մարմինը ցաւ էր տուել և դժուար դուրսեան մէջ էր: Միամտանալով, որ նա կենդանի է, մարկիզուհին աչք ածեց իր շուրջը:

Նա սաստիկ տաք էր զգում այն բոցերից, որոնք պաշարել էին ապարանքն ու լափում էին ամեն բան, ինչ որ երկրաշարժը չէր կարողացել

աւերել: Այգոււմ միքանի դռներ այրուել էին, ծուխը, մարախուղն ու խեղդող տաքութիւնը մթնոլորդը դարձրել էին անշնչելի: Այս սոսկալի աւերածութեան տեսարանի հանդէպ մարկիզուհու մէջ զարթնեց խորին երախտագիտութեան զգացմունք: Նա ծնկի եկաւ և արտասուքն աչքերին գոհացաւ Աստուծոց իր ու իր զաւակի այդքան հրաշալի կերպով ազատուելու համար: Ապա հանգստացրեց նրան, իր երեսի արիւնը լուաց, գլուխը թաշկինակով կապեց, որովհետեւ արիւնը դեռ շարունակում էր հոսել, երեսային առաւ գիրկն և առաջին գործն եղաւ կամ մի անցք գտնել այգուց դուրս գալու և կամ քիչ շատ ապահով մի տեղ, ուր կարելի լինէր մինչև հրդեհի վերջանալն ըստապել:

Երկրաշարժն արդէն զագարել էր, սակայն երկրի խորքից եկող խուլ աղմուկն ու երբեմնակի ցնցումները դեռ շարունակուում էին: Քամին սուլում էր սոսկալի ուժով: Մարկիզուհին հազիւհազ էր քարշ տալիս իր ոտքերը, երկու անգամուայ ուշաթափութիւնը, սաստիկ լարուած դրութիւնն և արիւնքամութիւնը նրան բոլորովին ուժից ձգել էին: Նա իր քայլերն ուղղեց դէպի այգուց դուրս տանող ճանապարհներից մէկը, սակայն հաջեան տնից դուրս եկող ծուխն ու բոցը նրա առաջը փակեցին: Դիմեց մի ուրիշ կողմ, — այդտեղ էլ բարձրանում էր փլատակների դեռ ևս մխացող մի ահա-

գին կոյտ, և այլն: Որ կողմն էլ դառնար, մի արգելք միշտ դուրս էր գալիս նրա առաջ: Կարծես, նա գտնուելիս լինէր մի կղզեակի վրայ, կանգնած բոցավառ կրակի ծովի մէջտեղում:

Տաքութիւնը կամաց-կամաց դառնում էր անտանելի. տարաբաղդ մայրը չէր իմանում ինչպէս պաշտպանէր իր երեխային: Վերջապէս նրա միտքն եկաւ ստորերկրեայ նկուղը, ուր պահուում էին երկրադործական գործիքներ: Նա շտապեց այնտեղ և ցած ու խոնաւ նկուղում գտաւ իր ապաստանարանը չորս կողմը լափիկող հրդեհի դէմ: Նա նստեց միքանի ժամ. երեսան շատ լաց լինելուց ուժասպառ եղաւ ու քնեց, նա իր հագուստի մի մասը հանեց, նրանով փաթաթեց փոքրիկին, գլխի տակը խոտ ածեց և պառկեցրեց դետնի վրայ:

Այլփոնսն արդէն միքանի անգամ ուտել էր ուղել, և երբ նա քնեց, մարկիզուհու առաջին մտածութիւնն եղաւ այն, թէ չէր կարելի արգեօք ուտելու որևիցէ մի բան գտնել: Նա սկսեց շրջել պարտեզի մէջ և գտաւ հինգ հատ նարինջ ու երկու հատ տանձ և բերեց իր բնակարանը՝ գետնայարկ նկուղը: Հրդեհը դեռ ևս շարունակուում էր, իսկ ստորերկրեայ ցնցումներն ու տատանումները զագարել էին:

Առաջին օրը փոքրիկ Այլփոնսն իր քաղցը մի կերպ անցկացրեց մօր բերած մրգեղէնով: Մարկիզուհին յոյս ունէր, որ հրդեհն առաւօտուայ

գէմ փոքր ինչ կհանդարտի և կարելի կլինի փորձել այգուց մի կերպ ազատուել ու մարկիզին փնտուել, որն այժմ, անշուշտ, վշտացած սրտով լալիս է, մեռած համարելով նրանց: Մարկիզուհին ամբողջ գիշերն անցկացրեց անքուն, վշտի ու թախծի մէջ: Փոքրիկ Ալլիֆոնսը մրսելուց սկսեց լաց լինել: Սուսուտեան մայրը նրան տուեց վերջին տանձը, հագնուեց, վերցրեց նրան իր գիրկն և իր քայլերն ուղղեց դէպի ասպարանքը, յուսալով, թէ այդտեղով կարող կլինի ինքն իրեն մի կերպ փողոցը նետել: Սակայն, ադպտեղ մի կողմից գիշուած կային քարերի այնպիսի կոյտեր, որոնց վրայով կարելի չէր քայլ անգամ անել, իսկ միւս կողմից՝ կրակը դեռ բոլորովին էլ չէր հանգել և փլատակների շիկացած կտորները գիզուած էին այս ու այնտեղ, հազիւ ծածկուած մոխրի բարակ շերտով:

— Ոչ, այստեղից անցնելու ոչ մի հնար չկայ, — մտածեց մարկիզուհին ինքն իրեն և տըրտում տխուր գնաց ուրիշ ելք փնտուելու:

Նա քանի գնում աւելի ու աւելի էր անհանգստանում, Ալլիֆոնսն լաց էր լինում: Դանդաղ քայլերով գնում էր այգու քարուքանդ եղած պարբսպի շարունակութեամբ, փնտուելով դուրս գալու որևիցէ անցք: Վերջապէս նա նկատեց, որ պարբսպի մի ծալքում կրակի հետքեր չէին երևում, միայն տեսնուում էին աւերակներ: Մարկիզուհին

վերադարձաւ դէպի լճակը, ջուր խմեց, խմացրեց նաև երեխային, պոկեց տհաս նարինջներով մի ճիւղ և սկսեց առաջանալ:

Նա ընտրեց անասելի դժուարին մի ճանապարհ. ամեն մի քայլափոխում հարկ էր մագըլցել կուտակուած քարերի վրայով կամ պատի վրայով անցնել և կամ քայլել ծռուած, կախ ընկած քարերի միջով, որոնք կարող էին ամեն բոպէ պոկուել ու իրենց ամբողջ ծանրութեամբ ջախջախել նրան:

Ամբողջ օրը նա թափառեց աւերակների կոյտերի մէջ և ոչ մի կերպ չկարողացաւ դուրս գալ փլատակների այդ լաբիւրինթոսից: Նա անցնում էր աւերակների մի կոյտից միւսը, ոչ մի տեղ ոչ մի կենդանի էակ, իսկ մեռած, — որքան կամենաք: Ոչ մի կերպ չկարողացաւ ծանօթ մի փողոց գտնել, ամենքն էլ այն աստիճան լցուած ու ալլանդակուած էին, որ ոչ մէկը չէր կարելի ճանաչել: Երեկոյեան գէմ միայն նա սկսեց մարդկանց պատահել, որոնք հարևանցի կերպով պատասխանում էին նրա հարցումներին և շտապում փնտուելու իւրախններին, որոնց կորցրել էին այդ դժբաղդութեան ժամանակ:

Սակայն մարկիզուհուն լաջողուեց իր ըստացած վայրկիւսով ու անճիշտ տեղեկութիւնների շնորհիւ վերջապէս դուրս գալ մի այնպիսի տեղ, որտեղից երևում էր նաւահանգիստը: Նա բոլորո-

վին ուժասպառ էր եղել, որովհետեւ երկու օր էր, որ բերանը նշխարք չէր դրել: Քաղցած էր ու լաց էր լինում նմանապէս և փոքրիկ Ալլֆոնսը: Փառք Աստուծոյ, այդտեղ մարդիկ կային և կարելի էր նրանցից որեւիցէ մի բան գնել: Նա իր մօտ փող չունէր, ուստի ականջից օղը հանեց, դրա դիմաց նրան տուին մի նկանակ (GYALOKA) և դրանով մայր ու որդի իրենց քաղցը փոքր ինչ յագեցրին:

Նա նստեց քարափի աստիճանի վրայ և սկսեց մտածել. «Դու կարող եմ ամուսնուս գտնել,— հարցնում էր ինքն իրեն,— այստեղ ամենքն ինձ օտար են, ես ամենքից էլ վախում եմ: Կենդանի է արդեօք նա: Երէկ իմ աչքիս առաջ մեռածի նման վար ընկաւ տափին: Աստուած իմ, դու ինձ կրակից փրկեցիր, աւերակների տակ ջախջախուելուց պահպանեցիր, Դու ինձ մարդկանց երես հանեցիր, Աստուած իմ, օգնիր ինձ՝ գտնելու ամուսնուս, զաւակիս հօրը»:

Այս կարճ աղօթքից յետոյ, նա ոտքի ելաւ և թող ու մարած մի հայեացք ձգեց իր շուրջը: Ամեն կողմ մարդիկ եռում էին, աշխատանքի ու հոգսի մէջ էին, սակայն ոչ մի տեղ նա չբախտահեց ծանօթ դէմքի: Մարկիզուհին հայեացքը ձգեց դէպի ծովը. այնտեղ երևում էին հաշիւ-բաւոր նաւակներ, մակույկներ ու մեծ նաւեր, որոնք իրենց կարգի էին բերում և դի-

մում էին դէպի ցամաք. վերջինս արդէն հանդարտել էր և մի առժամանակ դարձեալ ապահով կարելի էր համարել:

Տարբաղդ կինը, մտածմունքի մէջ խորասուզուած, նայեց դէպի հեռուն և մտածում էր, թէ ինչ միջոցով կարող էր տեղեկութիւն ստանալ իր ամուսնու մասին:

«Այդ դձուք էք, գեղեցիկ սինեօրա»,— լանկարծ նրա ետևից լսուեց ծանօթ մի ձայն: Մարկիզուհին յետ դարձաւ, նրա ետևում կանգնած էր այն միւսնոյն կինը, որը նախընթաց երեկոյեան նրա վշտին զգացակից էր եղել: «Եւ ձեր որդին կենդանի է ու ազատուած: Ձեզ հետ հրաշք է պատահել, ս. աստուածածինն ինքը ձեզ հովանաւոր է եղել...» — այդ միւսնոյն բովանդակութեամբ դարձեալ բաւական բաներ ասաց այդ շատախօս պառաւը:

Յարմարաւոր բոպէն ընտրելով, մարկիզուհին հարցրեց նրան. «չգիտե՞ք արդեօք, թէ ի՞նչ պատահեց իմ ամուսնուս և թէ Դու է գտնուում նա այժմ: Այստեղ էր, որ երէկ ես նրանից բաժանուեցի»:

— Ահ, խեղճ ու թշուառ. ինչպէս նա ինքն իրեն սպանում էր ձեզ համար. հէնց որ ուշքի էր գալիս, ինքն իրեն փոքր ինչ հաւաքում, իսկոյն գոռում էր՝ «Իզարէլա, Իզարէլա», և նորից ուշքից գնում. այդ վիճակի մէջ նա մնաց

մինչև մութն ընկնելը: Ծովն արդէն հանդարտել էր: Մի գեղեցիկ զբօսանաւի նաւաստիներն դուրս էին եկել ափը: Պահանջից մէկը պատահամբ հանդիպեց ձեր տնօրէնուն. ձեռքերը շփեց ու բացականչեց. «Աստուած իմ, այժմ, դա մեր տէրն է. հարկաւոր է նրան ազատել»: Նա իրեն օգնութեան կանչեց մի ուրիշ նաւաստի և երկուսը միասին նրան տարին զբօսանաւը, ուր մինչև այժմ էլ պառկած է:

— Արդեօք մի նաւակ չի գտնուի այստեղ և չի կարելի ինձ զբօսանաւը տանել. այդ ծառայութիւնն այնտեղ լիովին կվարձատրուի. ես հէնց այս րոպէիս էլ կվճարեի, սակայն հետո ոչինչ չունեմ:

— Ժամանակը, սինեօրա, շատ վատ ժամանակ է, ամեն մարդ իր ցաւն ու դարձն ունի, ոչ ոք չի համաձայնի ձրիաբար մի քալլ անգամ անել:

— Ահաւասիկ ձեզ ականջիս օղը, միւսն ես արդէն տուել եմ ուրիշի. դա հարիւր դահեկան արժէ, վերցրէք այն, ձեզ լինի և գտէք ինձ համար մի նաւակ ու նաւակապետ:

Պառաւն աչքի կապը կտրած վերցրեց օղը, անշալտացաւ: Հինգ րոպէ յետոյ, նա բերեց մի երիտասարդ ձկնորս ու ասաց. «Սինեօրա, սա իմ թոռս է՝ Լուիշի, նա ձեզ կտանի զբօսանաւը, որը կանգնած է ահա այնտեղ, նաւահանգստի միւս

ծայրում, դէպի ծովը տանող անցքի մօտ»:

Մարկիզուհին իր որդու հետ միասին նստեց նաւակը, երիտասարդ Լուիշին քաշեց իր թիւերը և փոքրիկ նաւակը սկսեց թռչել ծովածոցի հանդիստ ջրերի միջով: Մարկիզուհու տեսակցութիւնն իր ամուսնու հետ եղաւ խիստ սրտաշարժ:

Մարկիզը հիւանդ պառկած էր: Մահացն, թնչ հիւանդութիւն էր այն, որ չանցնէր, երբ նա իր առաջ տեսնում էր իր կնոջն ու որդուն, մանաւանդ, որ այդ առաջ էր եկել իր սիրելիներին կորցնելու կսկծից:

Այդ գէպից լետոյ, մարկիզը հեռացաւ Մետսինայից և տեղափոխուեց հիւսիսային Իտալիա, ուր այդպիսի երկրաշարժեր տեղի չեն ունենում: Նա այլևս չէր ուզում քարեայ մեծ տներում ապրել, հէնց այդ պատճառով էլ իր բնակութեան համար միշտ ընտրում էր փայտեայ շինութիւններ: Պրանից լետոյ, երկրաշարժը ոչ մի անգամ չվրդովեց նրանց երջանկութիւնը: Այլփոխը մեծացաւ, դարձաւ բարի ու խելացի երիտասարդ և միշտ էլ արտասուում էր, երբ պատմում էր այն մասին, թէ ինչպէս իր մայրը գէպի նրան ունեցած սաստիկ սիրուն՝ քիչ էր մնացել, որ ինքն իրեն կորստի մատնէր:



ԳԻՊՈՒԱԾՆԵՐ ԲԵՐԱՆԺԻԻ ԿԵԱՆՔԻՑ:

Անցեալ դարում, Ֆրանսիայում ապրում էր հռչակաւոր բանաստեղծ Բերանժէն: Նա մեռաւ Փարիզում, 1857 թ: Նա ունի շարագրած ժողովրդական շատ երգեր, և գծուար է գտնել Ֆրանսիայում մի մարդ, որ ծանօթ չլինի նրա երգերին. ամեն մի գրադէտ կամ անգրադէտ կամ անգիր գիտէ բանաստեղծ Բերանժէի երգերն և կամ երբեկիցէ լսած է անպատճառ նրանցից մէկը կամ միւսը:

Բերանժէն գիտէր այնպէս խօսել, որ նրա ամեն մի խօսքն արձագանգ էր գտնում հասարակ ժողովրդի սրտում: Նա նրան շատ լաւ էր ճանաչում, որովհետեւ երկար ժամանակ ապրել էր այդ ժողովրդի մէջ և ինքն իր համար ասում էր. *որորոցում եղածս ժամանակ ես փնտրում եմ յարդի վրայ*: Դրանովուզում էր ասած լինել, թէ ինքը հասարակ ու աղքատ ծնողների զաւակ էր: Իր ամբողջ կեանքը նա անցկացրեց աղքատութեան մէջ: Նրա աղքատութիւնն երբեք հոգս չէր պատճառում և

գրամն ու հարստութիւնը շատ քիչ էին հետաքրքրում նրան: Աւելորդ գրամ ունեցած ժամանակ, նա միշտ էլ միջոց էր գտնում ուրիշին բարեք անելու և իր ունեցածը գործ էր դնում ոչ իր համար, այլ նրանց համար, որոնք իրենից աւելի պակաս ունէին:

Նա իր երգերը յաճախ գրում էր որեկիցէ առիթով և նրանց մէջ արտայայտում էր այնպիսի զգացումներ, որոնք միանգամայն հասկանալի էին հասարակ ժողովրդին: Վերջինս շատ անգամ դժգոհ էր լինում կառավարութեան այս կամ այն կարգադրութիւնից, և որովհետեւ Բերանժէն իր երգերի մէջ շատ անգամ արտայայտում էր այդ միւսնոյն դժգոհութեան հոգին, ուստի և զարմանալի չէր, որ կառավարութիւնն ևս անբաւական էր նրա երգերից ու շատ անգամ դատի էր մատնում նրան իր գրածների համար:

Այսպէս, 1821 թ. նա ունի գրած մի քանի երգեր, որոնց մէջ ծաղրում էր կառավարական դանազան հաստատութիւնները: Նրան դատի մատնեցին և դատարանը վճռեց երեք ամսուայ բանտարկութիւն ու հարիւր քսանհինգ ռուբ. տուգանք: Բանաստեղծն առանց դժգոհելու հնազանդեց դատավճռին, տուգանքը վճարեց և երեք ամիս բանտ նստեց, սակայն ամբողջ Փարիզը ցաւում էր նրա համար կարեկցում էր նրան և նրա

հետ կառավարութեան ունեցած վարմունքը համարում էր անարդար:

Շատ ժամանակ չէր անցել բանտից արձակուելուց յետոյ, երբ Բերանժէն մի անգամ, աշնանը, երեկոյեան գէմ, անցնում էր Փարիզի փողոցներից մէկով: Եղանակը շատ ցուրտ էր և բանաստեղծը հագած ունէր բամբակեայ տաք սիւրտուկ, վերից վար կոճկած և գլխարկը մինչև աչքերը քաշած: Նա յենում էր խաղողի վազից շինուած ձեռնափայտի վրայ: Իր սիրելի սրճարանը գնալու համար նա անցնում էր ամենահեռաւոր, դադարի փողոցներով, և այդպէս վարուելու պատճառն այն էր, որ ծանօթների չպատահի և խոյս տուած լինի շարունակ իրեն արուած յարգանքի ցոյցերից, որոնցով ամենուրեք զիմաւորում էին, երբ ճանաչում էին նրան: Այդ բանը նրա վրայ շատ վատ էր ազդում:

Նոյեմբերեան ցուրտ քամին Բերանժէի մինչև ոսկրները թափանցում էր և նա քալելն արագացնում էր, որ որքան կարելի է շուտով հասնէր իր ծանօթ սրճարանը: Մութն արդէն ընկել էր, մի բոլորովին խուլ փողոցի անկիւնը ծռուելու վրայ էր, երբ յանկարծ Բերանժէի ականջին զիպաւ մանկական հեկեկանքի խեղդուած մի ձայն:

Նա կանգ առաւ և սկսեց ականջ դնել, սակայն հեկեկանքի ձայնը ալիւս չկրկնուեց:

— Մի՛թէ այդ իրօք երեխայի ձայն չէր, այլ միայն ինձ թուեց, — հարցնում էր նա ինքն իրեն: — Ոչ, ոչ, ես շատ պարզ կերպով լսեցի: — Բերանժէն նայեց իր շուրջն և ոչ ոք չնկատեց:

— Ո՞վ է այդտեղ լացողը, — հարցրեց նա իր բարձր ու մինչև սրտի խորքերը թափանցող մեղմ ձայնով, սակայն, ոչ մի պատասխան: — Ո՞վ է այդտեղ լաց լինում, — կրկնեց նա աւելի բարձր ձայնով:

Այդ խօսքերի վրայ պատի անկիւնից առաջ եկաւ մի երեխայ: Նա հագիւ էր կարողանում իր ընդարմացած ու մերկ ոտքերի վրայ կանգնել, Բերանժէն մօտեցաւ նրան և փաղաքշտնքով հարցրեց նրան:

— Լացողը դ՞ու էիր:

— Այո՛, ես էի, — դողդոջիւն ձայնով ու արտասուքն աչքերին պատասխանեց երեխան: Նրա արտասանութիւնից խկոյն երևում էր, որ նա սովորացի էր, այն դժբախտներից մինը, որոնք ամեն տարի գալիս են Սովոյայից Փարիզ մի կտոր հաց աշխատելու համար:

Բերանժէն երեխայի խօսքը կտրեց ու հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ, զաւակս:

— Ես քաղցած եմ ու մրսում եմ, — լաց լինելով պատասխանեց նա:

— Եթէ քո արհեստդ կօշիկ սրբել է, փոքրիկ

բարեկամս, ինչպէս ես տեսնում եմ, նայելով խողանակներիդ ու ներկերի տուփերիդ, այդ դէպքում դու լաւ տեղ չես ընտրել քեզ համար, այստեղից անցուգարձ անող շատ քիչ կայ, հետեալ բար շահածդ էլ կլինի շատ չնչին:

— Ա՛հ, այո՛, խիստ չնչին:

— Ինչպէս երևում է, Փարիզ նոր ես եկել:

— Ընդամենն երեք շաբաթ է:

Բերանժէն բռնեց երեսալի ձեռքից ու ասաց նրան.

— Գնանք ինձ հետ, երևի, այստեղի փողոցները քեզ աւելի ծանօթ են, քան թէ ինձ: Ինձ տար որևիցէ ստորին ճաշարան, որտեղ կարելի լինի քեզ կերակրել:

— ձանաչում եմ, ճանաչում եմ. երթանք, այստեղից ոչ շատ հեռու մի հիւրանոց կայ, ուր բանուորներն են ճաշում:

— Շատ լաւ, առաջնորդիր ինձ:

Նրանք գնացին: Բերանժէն լուզուած էր, նա զգում էր դժբաղդ երեսալի միայնակ ու անմխիթար դրութիւնը, նա տեսնում էր, որ այդ թըշուառն իր ծնողների ու հայրենիքի կարօտն էր քաշում, որ նա այդ ընդարձակ, բազմամարդ Փարիզում չուներ ոչ մի ծանօթ կամ բարեկամ, որ նա չէր կարողանում իր օրապահիկն անգամ աշխատել և այժմ քաղցածութիւնից ու ցրտից լաց էր լի-

նում: Նա ցանկանում էր որքան կարելի է շուտով կերակրել ու տաքացնել այդ երեսալին և այդ պատճառով էլ այնքան արագ էր քայլում, որ երեսան վազելով հազիւ էր նրա ետևից հասնում: Նրա սառած ու ընդարմացած ոտքերը չէին հնազանդում նրան:

Նրանք վերջապէս հասան ճաշարան, և երբ լուսաւորուած սենեակի շէմքից ներս դրին ոտքները, Բերանժէն ուշադրութեամբ նայեց իր հովանաւորեալի վրայ: Նա տասներկու տարեկանի մօտ երեսալ էր, սակայն աստիկ նիհար լինելու պատճառով, այդ տարիքից աւելի փոքր էր ցոյց տալիս. նրա դէմքը մեռելի նման գունատ էր, շրթուները ցրտից կապտել, ձեռքերն ու ոտքերը կարմրել և ուռել էին:

Նրանք մտան մի մեծ սենեակ, ուր դրուած էին բազմաթիւ սեղաններ: Պրանց շուրջը նստած ճաշում էին բանուորներ, ոմանք, ճաշը վերջացրած լինելով, ծխում էին և խօսակցում իրար հետ, շատերն ևս թուղթ էին խաղում ու Բերանժէի երգերից երգում: Նրանք փողով չէին խաղում, սեղանի մի ծայրում թափուած էին ճրդոտուած տաշեղի կտորներ և տարուողների քթին անց էին կացնում այդ տաշեղներից մի-մի հատ, և այդ կատակը ծիծաղ ու մեծ բաւականութիւն էր պատճառում ներկայ եղողներին:

Բերանժէն մի ակնարկ ձգեց սենեակում

նստած հիւրերի վրայ, ժպտաց նրանց ուրախութեան վրայ և ապա դարձաւ դէպի սիրուն ճաշարանապետուհին, որը աչքից չէր թողնում նրան և զարմանում էր այն բանի վրայ, թէ ինչպէս իր ճաշարանն էր եկել մաքուր ու լաւ հաճնուած այգալիսի մի պարոն, որ ըստ երևոյթին պատկանում էր բոլորովին ուրիշ շրջանի և որի տեղն աւելի շուտ մի սրճարան էր, քան թէ իր ճաշարանը։ Բերանոթէն դարձաւ նրան ու ասաց.

— Բարի եղէք կերակրել իմ հաշուիս այգերեխային, տուէք նրան ուտելու այն ամենից, ինչ սննդարար բան որ ունէք։

— Այս ըոպէիս նրա համար պատրաստել կտամ ընթրիք,—ասաց դեռատի օրիորդն և շտապեց կատարելու իր խօսքը։

Բերանոթէն առհասարակ սիրում էր դիտել հասարակ ժողովրդի կեանքը։ Նա նստելու համար ընտրեց ամենահեռաւոր ու մութ անկիւնն և այգետեղից դիտում ու լսում էր հիւրանոցում անցած դարձածը։ Նրա կողքին նստեց կօշիկ սրբոյ երեխան, որը հրճուած էր զգացած տաքութիւնից և ուրախ-զուարթ ոգևորւում այն մտքով, թէ մի-երկու ըոպէից իրեն տալու են տաք ու համեղ կերակուր։

Օրիորդը վերադարձաւ և փոքրիկ սալոյացու առաջ դրեց նրա ընթրիքը. նա երեսը խաշակնքեց և սկսեց ուտել։ Բերանոթէն բաւականութեամբ

նայում էր նրա վրայ։ Միքանի ըոպէից նրա ուշադրութիւնը դարձաւ սենեակի միւս ծայրում բարձրացած աղմուկի վրայ։

— Այո՛, — գոռում էր մէկը, — ես ինքս ականջովս լսեցի դռնապանից, որ մեր Բերանոթէին բաց են թողել. եկէք ի պատիւ նրա երգենք այն երգը, որի համար նրան բանտարկել էին։ Ամօթ մեզ, որ չկարողացանք նրան պաշտպանել ու ազատել։ Դեհ, սկսեցէք. շուտ-շուտ պէտք է երգենք այն, որ չմոռանանք։

Եւ ներկայ եղողները բոլորը միաձայն սկսեցին ամենքին լաւ ծանօթ երգը. ձայները թէև խուլօտ ու աններդաշնակ էին, սակայն եռանդ—որքան ուզես, և իւրաքանչիւրն աշխատում էր իր ընկերից աւելի բարձր գոռալ։

Բանաստեղծի սիրտը ակամայից թունդ եղաւ այն ոգևորութիւնից, որով նրանք երգում էին։

— Եւ այսպիսի մի հրաշալի երգի համար նրան բանտ նստեցրին,—աղաղակից երգեցողներից միին երգը վերջանալուց լետույ։

— Ինչ ասել կուզի, բանտարկել մի պատուաւոր ու ազնիւ մարդու... Ինչպիսի՜ խայտառակութիւն...

— Կեցցէ՛ Բերանոթէն,—բացականչեց երրորդը, բարձրացնելով իր բաժակը։ Ուրախական աղաղակներն ամբողջ տունը թնդացրին։

Բերանժէն մինչև ականջները կարմրեց, աչքերը փալլատակեցին և սիրտը սկսեց այնքան ուժգին բաբախել, կարծես, կրծքից ուզում էր դուրս թռչել: Սակայն իսկոյն ինքն իրեն հաւաքեց և հայեացքը դարձրեց երեսփայի վրայ: Պնակները բոլորն էլ դադարկ էին: Օրիորդը կանգնած էր նրանց մօտ և ամենայն ուշադրութեամբ դիտում էր բանաստեղծին: Բերանժէն թեքուեց գէպի երեսան և հարցրեց. «կշտացա՞ր թէ ոչ»:

— Ահ, շնորհակալ եմ ձեզանից, ես բոլորովին կշտացայ, մեր տնից դուրս գալուցս լետոյ այգպէս ճաշած չունէի:

— Շատ բարի, արի, ուրեմն, գնանք:—Բերանժէն մնաս բարև ասաց և դիմեց գէպի դուռը: Օրիորդի գէմքի վրայ կարգաց, որ նա ճանաչել էր իրեն: Ճաշարանապետուհին ամենայն քաղաքավարութեամբ ընկերացաւ նրան մինչև դուռն և ճիշտ այն ընդունեց, երբ բանաստեղծն ոտքը շէմքից դուրս էր դրել, օրիորդը նրա թևից բռնելով կանգնեցրեց և ասաց նրան:

— Ազնիւ պարոն, ես ձեզ ճանաչեցի, թոյլ տուէ՛ք ինձ ձեր ձեռքը համբուրել:

Նա նայեց նրան, ժպտաց ու ձեռքն երկարացրեց գէպի նա: Օրիորդը բռնեց այն, սաստիկ սեղմեց, թափ տուեց ու կանչեց. «գիշեր բարի, պարոն Բերանժէ»,—և փախաւ մտաւ ճաշարան:

Բերանժէն հագիւ էր կարողացել միքանի

քալլ հեռանալ, որ նրա ետևից սկսեցին լսուել բարձրագոյ ուրախական աղաղակներ, որոնք գալիս էին ճաշարանի կողմից. ի միջի այլոց, լսոււմ էր նաև իր անունը: Ինչպէս երևում էր, օրիորդը պատմել էր ճաշարանում նրա գտնուելու և երեսփային կերակրելու մասին:

Բերանժէն թէև արդէն ծռուել էր ուրիշ փողոց, սակայն ուրախական աղաղակները դեռևս հասնում էին նրա ականջին:

Բոլոր տների պատուհաններից լոյս էր երևում և բոլոր խանութներն դեռևս բաց էին: Բերանժէի աչքին ընկաւ մի խանութ, ուր հին շորեր էին ծախոււմ: Նա կանգ առաւ դրան առաջ ու ասաց. —մտնե՛ք այս խանութը:

Խանութպանը քաղաքավարութեամբ գլուխ տուեց և հարցրեց Բերանժէից.

— Ի՞նչ էք կամենում:

— Արդեօք դուք չէք ունենայ գործածուած, բայց լաւ ու տաքուկ մի ձեռք հագուստ այս երեսփայի համար:

Այդ ընդունելի լամպի լոյսը ընկել էր Բերանժէի երեսին. վաճառականը շատ մեծ ուշադրութեամբ նայում էր նրան և ընկել էր ինչ-որ մտածմունքի մէջ, սակայն լանկարծ նրա գէմքի վրայ արտաթափուեց վստահութիւն, աչքերը ուրախութեամբ փալլատակեցին, նա իր ձեռքերը

շվեց և խոնարհաբար խնդրեց Բերանժէից՝ չզրկել նրան իր սենեակում, վառարանի մօտ նստելու պատուից, մինչև որ ինքն երեխայի վրայ հազուստ փորձի և նրա համար ոտնամաններ ընտրի:

— Այդ ամենը մի րօպէում դժուար է կատարել, ուստի վատ չէր լինի, եթէ փոքր ինչ հանգստանալիք ու տաքանալիք:

Սենեակը շատ տաք էր, մինչդեռ դուրսը փչում էր սաստիկ ցուրտ ծակող քամի, որը խանութի բոլոր ծակօտիքներով ներս էր փչում: Բերանժէն կարգին մրտել էր և ամենայն հաճութեամբ ընդունեց տաքուկ սենեակում նստելու վաճառականի կողմից արուած առաջարկը: Այդտեղ նրան դիմաւորեց վաճառականի մանկամարդ, բարեհամբույր կինը, աթոռը քաշեց վառարանի մօտ և խնդրեց նստել: Վաճառականը զնաց երեխայի հազուստը փորձելու, իսկ կինն ևս առաւ իր աշխատանքն ու նստեց վառարանի մօտ: Կարճ ժամանակից նրա ու հիւրի միջև սկսուեց տաք խօսակցութիւն:

Վաճառականը խանութ դուրս գալուն պէս, դռնաշուկով սալոյացուն, հարցրեց.

— Շանաչում ես դու այդ պարոնին, որի հետ եկար այստեղ:

— Ոչ, չեմ ճանաչում, սակայն նա շատ բարեսիրտ մարդ է: Փոքր ինչ առաջ նա ինձ շատ

կուշտ կերակրեց, ես այդպէս երբէք չէի ճաշած:

— Հաւատում եմ, հաւատում եմ, նա միշտ էլ այդպէս է: Բայց դու գիտե՞ս նրա անունը:

— Ոչ, բայց կարծեմ, Բեր... Բեր...

— Գուցէ Բերանժէ է, — ասաց վաճառականը:

— Այո՛, այո՛, ճաշարանապետուհին հէնց այդ անունը տուեց նրան, երբ նրա ձեռքը համբուրեց:

— Որքան ուրախ եմ, սիրելիս, որ քո շնորհիւ այդպիսի բաղդի եմ արժանացել. ամբողջ կեանքիս մէջ չպէտք է մոռանամ: Բերանժէն իմ բնակարանումս:

Վաճառականը սրտի սաստիկ ուրախութիւնից ինքն իրեն կորցրել էր, արածը-գրածը չէր իմանում, մէկ մի բան էր վերցնում, մէկ էլ տեսնես, այն դնում, մի ուրիշն էր վերցնում, խանութի մէջ շուռ-մուռ էր գալիս և չէր գտնում այն, ինչ որ փնտռում էր: Անցաւ բաւական ժամանակ, մինչև որ փնտռում էր: Անցաւ բաւական ժամանակ, մինչև որ փոքր ինչ հանգստացաւ և կարողացաւ գտնել երեխային յարմար մի հազուստ: Վերջապէս երեխան հագնուեց, ուրախութիւնից ամբողջ երեսը վառւում էր. հազուստը միանգամայն համապատասխան էր տարուալ եղանակին և տաքանում էր նրան. բրդեալ գուլպաներն ու ամուր ոտնամանները նրա ոտքերը պաշտպանում էին ցրտի ու քարերի դէմ: Իր հին հազուստները խնամքով ծալեց, թելով կապեց այն արկղի ծած-

կոցին, որի մէջ գտնուում էին կօշիկ սրբելու նրա խողանակներն ու ներկերը:

Վաճառականը հրճուանքով նայում էր նրա վրայ, և երբ ամեն բան պատրաստ էր, ուրախ ուրախ ասաց նրան. — կեցցե՛ս, այժմ երթանք միւս սենեակը, դու քեզ ցոյց տուր պ. Բերանժէին և շնորհակալութիւն յայտնիր նրան:

Երեխան վաճառականի ետևից մտաւ միւս սենեակն ու սաստիկ յուզմունքից՝ ոչ մի բառ չկարողացաւ արտասանել, ուրախութիւնից փալատակող նրա աչքերից արտասուէր հոսում էր առատօրէն:

Բերանժէն ժպտաց, նրան դարձրեց ամեն կողմը, ամենայն բաւականութեամբ շօշափում էր հաստ ու տաք մահուդը, ուշադրութեամբ նայում էր դուլպաներն ու ոտնամանները: Շատ գոհ մնաց և, գառնալով դէպի վաճառականը, հարցրեց. — Ինչ արժէ այդ բոլորը:

Վաճառականը, հակառակ սպասուածի, նշանակեց շատ չնչին գին: Բերանժէն հանեց քսակը, ամբողջ ունեցած փողը թափեց սեղանի վրայ և սկսեց հաշուել, բայց ինչպէս վախեցաւ, երբ նկատեց, որ դրամը պակասում է և չէ կարողանալու վաճառականին հագուստի ամբողջ արժէքը վճարել: Նա բոլոր գրպանները փնտռեց, սակայն աւելի ոչինչ չգտաւ:

— Աստուած իմ, — մըմնջեց նա միանգամայն

ինքն իրեն կորցնելով, — ճշմարիտն ասած, ինքս էլ չգիտեմ, թէ ինչ անեմ, փողս պակասում է...

Վաճառականը, ժպիտը շրթունքներին, հաւաքեց դրամը, ածեց դրամարկղն ու ասաց.

— Աղնի՛ւ մարդ: Դուք առանց այդ էլ շատ մեծ բարիք էք արել այդ երեխային, թոյլ տուէք, ես էլ իմ կողմից մի բան արած լինեմ նրա համար: Ինձ այլևս ոչինչ չէ հասնում, դուք ամբողջը վճարել էք: Ես երախտապարտ եմ այդ երեխային, որովհետեւ նա ինձ խիստ մեծ բաւականութիւն պատճառեց. եթէ նա չլինէր, հուշակաւոր բանաստեղծ Բերանժէն, ամբողջ Փրանսիայի սիրելին երբէք էլ իմ տունս ոտք չէր կոխի:

— Այդ ինչ եմ լսում, — բացականչեց կինը, — մի՞թէ դա պարոն Բերանժէն է:

— Այո՛, այո՛, դա Բերանժէն է, և նրան այստեղ բերողն եղել է այս թշուառ երեխային օգնելու ցանկութիւնը: Օրհնուի՛, ուրեմն Փրանսիայի ամենամեծ ու աղնուահօգի բանաստեղծը: Չէք կարող զաղափար անգամ կազմել, թէ ինչ աստիճան ձեզ սիրում ենք:

Բերանժէի շփոթութիւնը ըոպէ առ ըոպէ աւելանում էր: Վաճառականի կինը բռնեց նրա ձեռքն ու համբուրեց, իսկ երեխան՝ արտասուքն աչքերին՝ ձեռքը մեկնեց միւսին:

— Բաց թողէք ինձ, բաց թողէք, պէտք է

գնամ,—կրկնում էր Բերանժէն, աշխատելով ձեռքերը նրանցից ազատել, մինչդեռ իր աչքերն էլ լցուել էին խանդաղատալից արտասուքով։ Վերջապէս նա մի կերպ ազատուեց և դուրս եկաւ խանութից, աշխատելով իր յուզմունքը ծածկել, բայց ետեւից լսում էր. «Աստուած քեզ օրհնի, Աստուած քեզ բարի տայ»։

Երկար շրջում էր նա փողոցներում, գլուխը քաշ ձգած։ Վերջապէս եկաւ իր սիրելի սրճարանն և նստեց պատուհանի տակ, իր սովորական տեղում։ Նա լուռ էր, սակայն գէմքը փալլում էր ուրախութիւնից։ Նա ձեռք անգամ չտուեց իր առաջ դրուած սրճի բաժակին, և երբ սրճարանապետուհին նրան լիշեցրեց սրճի սառչելու մասին, նա ժպտեց, աչքը ձգեց նրա վրայ, սկսեց խմել, միևնոյն ժամանակ աչքի անցնելով ձեռքին բռնած լրագիրը։

Երբ ոտքի ելաւ և ուզում էր գնալ տուն, ասաց.

— Ներողութիւն, որ այսօր չեմ կարողանալու սրճիս դրամը վճարել, խնդրում եմ, վստահ լինել ու հաւատալ ինձ. զրպաններս դադարկ են բոլորովին։

Սրճարանապետուհին ծիծաղեց ու պատասխանեց.—գիտեմ, գիտեմ, թէ ուր կարող են ձեր փողերը գնացած լինել, ինչպէս երևում է, ձեզ դարձեալ թշուառներ են պատահել և ձեր գրը-

պանները դադարկել են։ Ես հագուով ուրախ եմ սրճի փողը ձեզ հաւատալուս համար, որքան կարող էք յաճախ այցելեցէք և որքան կարելի է, պարտքով շատ սուրճ խմեցէք։

Այդ ժամանակից ի վեր անցել էին շատ տարիներ։ Բերանժէն ըստ առաջնոյն դարձեալ շարունակում էր յաճախել իր սիրելի սրճարանը, նստում էր դարձեալ միևնոյն տեղում, պատուհանի տակ, ոչ հեռու գրելու սեղանից, որտեղից որ ճաշարանապետուհին պատուէրներ էր ընդունում և կարգադրութիւններ անում ծառաներին ու աղախիններին։ Բերանժէն դալիս նստում էր ըստ իր սովորութեան, նրան տալիս էին լրագրներ ու սուրճ, առանց հրամանի սպասելու։ Նա այդտեղ նստում էր երբեմն երկու ժամ, երբեմն աւելի և դուրս էր գնում նոյնպէս հանդարտ, ինչպէս մտել էր։

Մի անգամ նա դարձեալ նստած էր իր տեղում. հազիւ էին նրան սուրճն ու լրագրները բերել, և ահա յանկարծ շտապով սենեակ է մտնում մի սիրուն աղջիկ, մօտ տասներկու, տասներեք տարեկան, սկսում է դահլիճի մէջ աչքերով արագ ինչ-որ մէկին փնտռել և, սրճարանապետուհուն նկատելով, մօտենում է նրան ու սկսում է տաքտաք ինչ-որ բան պատմել նրան։ Աղջկայ հնչուն ձայնը, նրա աղքատիկ, բայց վերջին ծայր մաքուր

հազուստը, նրա վեհ շարժումներն իր վրայ դարձրին Բերանժէի ուշադրութիւնը: Լրագրի ետեւից բանաստեղծը նայեց աղջկան և տեսաւ, որ նա արտասուքն էր սրբում: Բանաստեղծն այնպէս ցոյց տուեց, թէ իբր գրաւուած է լրագրի ընթերցանութեամբ, մինչդեռ, իր ամբողջ ուշադրութիւնը լարել էր լրսելու համար, թէ ինչ են խօսում այնտեղ: Աղջկայ խօսքերից նա հասկացաւ, որ մայրն երեք ամսից ի վեր էր, հիւանդ պառկած էր, որ նա այլևս հնարաւորութիւն չունէր բնակարանի վարձը վճարելու և որ խստասիրտ տանտէրը չէր ուզում սպասել, տնից դուրս էր անում, պարտքի փոխարէն պահելով այն ամենը, ինչ որ նրանք ունէին, մինչև անգամ հիւանդ մօր պառկած անկողինը: Աղջիկը խօսում էր յուսահատ և վառ գոյներով նկարագրում, թէ ինչպէս բոլոր երեխաներն ու մայրը հոգսի մէջ էին, լաց էին լինում և թէ ինչպէս ինքը վազել եկել էր այդտեղ՝ խորհուրդ հարցնելու համար:

Բերանժէն իսկույն ևեթ լրագիրը ծալեց, մի կողմը դրեց, արագ-արագ խմեց իր սուրճն և դուրս եկաւ փողոց: Սրճարանապետուհին, մի-քիչ փող տալով, աղջկան ճանապարհ դրեց և խոստացաւ ինքն էլ գալ, հէնց որ ազատ ժամանակ գտնի: Աղջիկը շնորհակալութիւն յայտնեց ու հեռացաւ:

Բերանժէն սպասում էր փողոցում և նրան

տեսնելուն պէս, հետեւեց նրան փողոցից փողոց: Աղջիկը հասաւ մի տուն և մտաւ ուղղակի դռնապանի սենեակը: Փարեգում բոլոր մեծ տներն ունեն իրենց դռնապանները, որոնց պարտականութիւնն է բաղի կարգապահութեան վրայ հսկել և բնակուողների դռները բանալիները պահել:

Երբ տանտէրը զժբազդ հիւանդ այրիին դուրս ձգեց, իրիւով նրանից ունեցած չունեցածը, նա սկզբում տպաստանեց դռնապանի սենեակը: Այդտեղ էր, որ մտաւ աղջիկն և նրա ետեւից՝ Բերանժէն: Նա իմացաւ, որ այդ ընտանիքը գտնուում է ամենաթշուառ վիճակի մէջ. մայրը հէնց նոր էր առողջացել իր երկարատեւ ու ծանր հիւանդութիւնից, որը նրան միանգամայն ուժասպառ էր արել: Բերանժէն ամենայն քնքշութեամբ հանգստացնում էր հիւանդին և, դառնալով դռնապանին, խնդրում է, որ թոյլ տայ հիւանդ կնոջ մի առժամանակ իր սենեակում մնալու, մինչև որ ինքը միջոց գտնի նրան օգնելու:

Դռնապանը խոստացաւ և Բերանժէն շտապեց դէպի իր բնակարանը: Նա այդտեղ մնաց այնքան, որքան հարկաւոր էր տանն իր ունեցած դրամը վերցնելու համար: Դուրս գալով տնից, կառք նստեց ու գնաց բնակարան վարձելու: Նա իր մտադրութիւնը կատարեց յաջողութեամբ, գտաւ չոր բնակարան, որի համար շատ էլ մեծ գին չէին պահանջում:

Նա վարձեց այդ բնակարանն այն պայմանով, որ անմիջապէս մաքրեն, վառեն և կարելի լինի մի ժամից փոխադրուել այնտեղ: Մի ամսուայ վարձը նա վճարեց կանխիկ: Բնակարանի հարցն այդպէս կարգադրելուց յետոյ, իսկոյն վերադարձաւ դռնապանի սենեակը, ուր թշուառ մայրն իր զաւակներով սպասում էր սրտատրուփ: Նրանք բանաստեղծին չէին ճանաչում, սակայն, դէմքից, ձայնից և վարմունքներից հասկանում էին, որ նա իրենց չի խաբի և այդ թշուառ դրուժեան մէջ կօգնի իրենց: Նրանք հաւատում էին նրան, ուստի և անհամբեր սպասում էին:

Նա ուրախ զուարթ մտաւ նրաց մօտ և յայտնեց, որ բնակարան արդէն գտել է և թէ հին տանտիրոջ հետ խօսելուց անմիջապէս յետոյ, նրանք իսկոյն կարող էին փոխադրուել: Բերանժէն գնաց տանտիրոջ մօտ խիստ ու ծանր կերպով լանդիմանեց նրան իր խստասրտութեան համար, խօսեց, թէ ինչպիսի սոսկալի տպաւորութիւն էր արել իր վրայ դէպի թշուառ ալրին ցոյց տուած նրա տմարդի հարստահարութիւնը, վճարեց կնոջ ունեցած պարտքն և պահանջեց վերադարձնել նրանից խլած բոլոր ինչքերը: Տանտէրը պարտաւորուած էր նրա բոլոր պահանջները կատարել: Բերանժէն իսկոյն ևեթ մշակներ վարձեց և իր աչքի առաջ թշուառ ընտանիքի կալքն ուղարկեց նոր բնակարան: Երկու ժամից

յետոյ, ամբողջ ընտանիքն արդէն իր նոր բնակարանումն էր և մեծ հրճուանքով տեղաւորւում էին իրենց նոր կացարանում:

Բանաստեղծն օրուայ մնացած մասն ևս անցկացրեց իր նոր բարեկամների հետ, նա իմացաւ, որ երկու որբերի հայրը մեռել էր երկու տարի առաջ. նա եղել էր ճարտար փորագրող և ունեցել էր բարեկեցիկ կեանքը, սակայն երկարաժամ հիւանդութիւնը վերի վայր խանգարել էր նրանց հանգստութիւնը, իսկ մահն ու նրան յաջորդող ամեն տեսակ դժբաղդութիւնները նրանց հասցրել էին ծայրայեղ չքաւորութեան: Տեղի ունեցած խօսակցութիւններից և իր ձեռք բերած մանրամասնութիւններից նա եկաւ այն եզրակացութեան, որ ինքը գործ ունէր մի պատուաւոր ընտանիքի հետ, որի անդամները սիրում էին միմեանց և նրանցից ամեն մինը պատրաստ էր իր անձը զոհ բերել միւսների համար:

Երեխաները մեծ հոգս էին տանում իրենց մօր վրայ, ամեն կերպ աշխատում էին զգալ չտալ նրան իրենց դրութեան ծանրութիւնն և կամ այս ու այն բանի մէջ իրենց ունեցած պակասութիւնը, իսկ մայրն ևս պատրաստ էր իր ամենավերջին ունեցածը տալու, միայն թէ նրանց սիրտը շահած, մխիթարած լինէր:

Մեծ որդին իր դէմքի համարձակ, զուարթ և խելացի արտայատութեամբ մասնաւորապէս

գուր էր գալիս Բերանժէին: Նա երկար խօսակցեց երախալի հետ, հարցուփորձ արեց, թէ ի՞նչ է սովորել և ի՞նչ կցանկանար դառնալ ապագայում:

Երեխան խոստովանեց, որ իր հօր նման ինքն էլ կցանկանար փորագրիչ դառնալ:

— Ես արդէն սկսել եմ նկարել սովորել և հայրս ինձ սովորեցրել է պղնձի վրայ փորագրել, —ասած նա Բերանժէին և բերեց, ցոյց տուեց իր նկարած նկարներն ու պղնձի տախտակի մի կտոր, որի վրայ գուրս էր բերուած ոչ-շատ մեծ մի նկար:

Բերանժէն շատ լաւ ծանօթ էր նկարչութեան. նա ուշի ուշով աչքի անցրեց երեխալի կատարած աշխատանքներն ու եկաւ այն համոզման, որ նա տաղանդ ունէր: Բայց չէոր այդ ձիրքը կարող էր խամրել ու ոչնչանալ, եթէ միջոց չունենար նրան զարգացնելու: Բերանժէն այդ բանը լաւ էր հասկանում, ուստի և վճռեց, ինչ միջոցով էլ լինէր, օգնել երեխային:

Նա մնաս բարեւ ասաց հիւանդ կնոջն ու նրա երեխաներին, խոստացաւ շուտով նորից այցելել նրանց և, գուրս գալով տնից, սկսեց թափառել, ուր որ աչքը կտրոււմ էր: Նա ամբողջովին խորասուզուած էր իր մտքերի մէջ և չէր էլ նկատում, թէ ո՞ւր է գնում և ո՞վքեր են իրեն պատահում:

Անսպասելի կերպով մէկը ձեռքից բռնելով, նրան կանգնեցրեց. նա գլուխը բարձրացրեց և

իր առաջ կանգնած տեսաւ իր մօտիկ բարեկամ բանկատէր Լաֆիտին:

— Այդ ի՞նչ է պատահել ձեզ, չլինի թէ էլի մի դժբաղդութեան մէջ էք ընկել: Մտածմունքից այնքան տարուած էք, որ ոչինչ չէք լսում ու տեսնում, գոռում եմ, գոռում եմ, չէք լսում, բարեւ եմ տալիս, բարեւ չէք առնում, էլի ձեր ճանապարհն էք շարունակում, կարծես թէ խլացած լինէք. ի՞նչ է պատահել ձեզ:

Բերանժէն ծիծաղելով նայեց նրան ու ասաց.

— Առանձին ոչինչ:

— Ո՞ւր էք գնում:

— Ես ինքս էլ չեմ իմանում, թէ ուր եմ գնում:

— Որ այդպէս է, երթանք մեր տուն ճաշի:

— Ինչու չէ, — պատասխանեց Բերանժէն և գնաց հարուստ բանկատիրոջ հետ միասին:

Այն օրը Լաֆիտի մօտ հիւրեր չկային և ճաշից լետուի, նա Բերանժէին առաջարկեց մի ձեռք դոմինօ խաղալ:

Երկուսն էլ ստատիկ սիրում էին դոմինօ խաղալ:

— Ամենայն սիրով, բայց մի պայմանով, որ մի ձեռքն արժենայ հինգհարիւր ֆրանք*):

— Օհօ, — բացականչեց բանկատէրը, — ինչպէս

*) Ռուսական դրամով այդ գումարն ամուսնի մօտ 165 ռուբլի:

երևում է, հարստացել էք և կամենում էք անպատճառ տարուել:

— Ամենեին էլ չեմ ցանկանում տարուել, ընդհակառակը, ուզում եմ տարած լինել:

— Ա՛յ զարմանալի բան: Մի՞թէ իմ բարեկամ Բերանժէն փողասէր է դարձել: Ա՛յ քեզ նորո՞թիւն:

Բերանժէն ուսերը վեր քաշեց ու պատասխանեց:

— Այժմ ինձ հէնց այդքան փող էլ հարկաւոր է:

— Համարձակութիւն չլինի հարցնել,— թեթեւ ժպիտով ասաց Լաֆիտը,— թէնչ բանի է հարկաւոր այդ գրամը: Պատրաստ եմ գրազ գալու, որ դուք անպատճառ էլի ինչ-որ չքաւոր ունէք, որին հարկաւոր է օգնել:

— Չէք էլ սխալուում, — բացականչեց Բերանժէն:

Եւ նա պատմեց այդ օրուայ հանդիպումն ու կարողացաւ բանկատիրոջ մէջ հետաքրքրութիւն գարթեցնել:

— Եթէ այդպէս է, — ասաց Լաֆիտը, — պատրաստ եմ առաջարկածդ պայմանով խաղալ:

Նա դարձրեց քարերն և խաղն արդէն սկսուած էր: Երկուսն էլ լաւ խաղացողներ էին, երկուսն ևս խաղում էին հանդարտ ու ամենայն ուշադրութեամբ և ամեն մի քար դնում էին լաւ մտածելուց յետոյ: Բաղդը Լաֆիտի կողմն էր, նա

համարեա տանելու վրայ էր, բայց ինչպէս եղաւ, մի անյաջող քար գրեց, Բերանժէն ծափահարեց, հրճուանքով վեր թռաւ իր տեղից ու բացականչեց.

— Տարե՛լ եմ, տարե՛լ եմ:

Լաֆիտը, չիրաւի, տարուած էր:

— Երբէք չէ պատահել, որ այդքան մեծ գումարի խաղացած լինեմ և սաստիկ նեղանում եմ, որ տարուեցի,— ասաց նա:

— Շատ ցաւալի է, — պատասխանում է Բերանժէն, — սակայն ի սրտէ ուրախ եմ ձեր ունեցած անյաջողութեան վրայ:

— Իսկ թէնչ կանէիք, եթէ դուք տարուած լինէիք:

— Ես ձեզ պարտք կմնայի այդքան գումար, որովհետեւ զրպանումս միայն երեք ֆրանք փող ունեմ:

Լաֆիտը բարձր ձայնով ծիծաղեց:

— Շատ բարի, մի ձեռք էլ խաղանք, դարձեալ 500 ֆրանքի:

— Շատ լաւ կլինի, — պատասխանեց Բերանժէն, — սակայն պայմանով, որ եթէ ես տարուեմ, տարածս 500 ֆրանքը չվերադարձնեմ ձեզ, որովհետեւ այդ գրամն ինձ չէ պատկանում, — ես կմնամ ձեզ պարտ: Համաձայն էք:

— Համաձայն եմ, — պատասխանեց Լաֆիտը, և խաղը նորից սկսուեց:

Երկուսն ևս խաղում էին մեծ ուշադրութեամբ,

երկուսն էլ իրենց բոլոր ուժերը լարեցին հակառակորդին յաղթելու համար, խաղի բաղդը երկար ժամանակ անորոշ էր, բայց վերջապէս Լաֆիտը յաղթութիւնը տարաւ:

— Ուրեմն, ինչպէս ենք անելու այժմ,— հարցրեց Լաֆիտը:

— Ոչինչ, երբեւիցէ կվճարեմ,—ասաց Բերանժէն:

— Ոչ սիրելիս, — պատասխանեց Լաֆիտը, սեղմելով նրա ձեռքը, — իմ խաղալուս նպատակը բոլորովին այդ չէր: Ինչպէս երևում է, այդ 500 ֆրանքը նուիրելու էք այդ երեսային, իսկ ինձ ամօթ է ձեզանից չետ մնալ, ես էլ իմ կողմից 500 ֆրանք կնուիրեմ: Իսկ ինչ վերաբերում է իմ ինքնասիրութեանս, նա արդէն բաւականութիւն գտել է. Փարիզի ամենալալտնի խաղացողներից մէկին գոնէ մի անգամ տարել եմ, իսկ զրամի՝ ես ամենեւին կարիք չունեմ:

Այս խօսքերից յետոյ, նա հանեց թղթապանակը, հաշուեց հազար ֆրանք, տուեց Բերանժէին ու ասաց.

— Վերցրէք այդ գումարն և մսխեցէք այնպէս, ինչպէս ցանկանում էք:

Այդ օրը Բերանժէն վերադարձաւ տուն այնքան ուրախ ու գոհ, որ ոտքերը տափից կտրուել էին և ամբողջ գիշերը քունը չէր տանում: Իր

ամբողջ մտածմունքը միայն այն էր, որ լոպէ առաջ երեսայի բաղդն որոշէր:

Առաւօտեան, հէնց որ հասաւ այցելութիւններ անելու ժամը, նա գնաց Փարիզի յալտնի նկարիչներից մէկի մօտ, նրա հետ խորհրդակցելու համար: Բանից երևաց, որ նկարիչն էլ էր ճանաչում փոքրիկ Ալլֆրէդի հօրն և սիրով յանձն առաւ օգնել Բերանժէին երեսային որևիցէ փորագրողի մօտ տալու: Ամեն բանից առաջ, երկուսն ևս գնացին այլրի կնոջ տունը: Նկարիչը նայեց Ալլֆրէդի նկարած նկարներն և սաստիկ գոհ մնաց. նրա կարծիքն էլ այն էր, որ անպատճառ հարկաւոր էր որևիցէ մէկին դիմել, և ինքն ու Բերանժէն գնացին մի փորագրողի մօտ, որը նոյնպէս ճանաչում էր Ալլֆրէդի հանգուցեալ հօրն ու սիրով վերցրեց իր մօտ երեսային ամենաչնչին վարձատրութեամբ: Բերանժէի ուրախութեանը չափ չկար:

Հետևեալ օրը Ալլֆրէդն մտաւ յալտնի փորագրչի աշակերտների շարքը: Բայց Բերանժէն խնդրեց այդտեղ, որ իր անունը չտան և չասեն իր ով լինելը: Դրամի մի մասը Ալլֆրէդի միջոցով ուղարկեց նրա մօրը, իսկ մնացած մասը տարաւ Լաֆիտին և թողեց նրա մօտ տոկոսով՝ այն պայմանով, որ ամբողջ գումարը համարուէր Ալլֆրէդի սեփականութիւն: Լաֆիտից ստացաւ մուրհակը

նա ուղարկեց Ալլֆրէդի մօրն և այլևս ոչ մի անգամ նրա բնակարանն ոտք չկոխեց:

Այրին իզուր աշխատեց իմանալ իր բարերարի անունը. Բերանժէն խոյս էր տալիս քաղաքի այն մասում երևալուց, ուր այդ կինն ապրում էր և ամբողջ մի շաբաթ իր սիրելի սրճարանն անգամ չէր յաճախում:

Սրճարանապետուհուն չլաջողուեց իր նախկին բարեկամուհու մօտ գնալ նոյն երեկոյեան, երբ նրա աղջիկն եկել էր իր մօտ: Սրճարանապետուհին այն կարծիքին էր, որ Բերանժէն չափաք է կարողացած լինէր իրենց խօսակցութիւնն ականջ դրած լինել, և չէր էլ նկատուել, թէ նա ինչպէս էր գուրս եկել սրճարանից, սակայն հէնց միևնոյն օրն իր միւս հիւրերին պատմել էր աղքատութեան դուռը հասած ընտանիքի տիւրը պատմութիւնը: Ամենքն էլ խղճում էին և սաստիկ դատապարտում այրիի նախկին տանտիրոջ խստասրտութիւնը, սակայն նրան դրամով կամ այլ ճանապարհով օգնելու մասին ոչ ոք էլ չէր մտածում: Միայն սրճարանապետուհին էր, որ մի գումար էր տուել թշուառ աղջկան և պատրաստւում էր էլի մի քան տանել մօրը, բայց որովհետև նա հէնց ինքն այրի էր ու շատ էլ մեծ կարողութեան տէր չէր, հասկանալի էր, որ նրա արած օգնութիւնն ևս չնչին կլինէր:

Սակայն նրա զարմանքը սաստիկ մեծ եղաւ,

երբ հետևեալ օրը, երթալով իր բարեկամուհու մօտ, նրան չկարողացաւ իր առաջուայ բնակարանում գտնել: Դռնապանը նոյնպէս չէր իմանում, թէ ուր է տեղափոխուել այրին և սրճարանապետուհին սաստիկ զարմացաւ, երբ դռնապանը նրան պատմեց, թէ ինչպէս մի անձանօթ պարոն, նախընթաց երեկոյեան աղջկայ հետ գալով, օգնել էր թշուառներին, նոր բնակարան էր վարձել նրանց համար և հնի պարտքը վճարել:

Սրճարանապետուհին սաստիկ ցաւում էր, որ չէր իմանում, թէ այդ ընտանիքն ուր էր տեղափոխուել: Նա ցանկանում էր նրանց օգնել, իսկ որ գլխաւորն էր, խիստ հետաքրքրւում էր իմանալ, թէ ով էր այն մարդը, որ այդքան կարեկցութեամբ էր վերաբերուել դէպի հիւանդ կինն ու նրա ընտանիքը:

Երկու օր էր, աղջիկը չէր երևում: Սրճարանապետուհին այրւում էր անհամբերութիւնից և երբ նա վերջապէս մտաւ իր սենեակը, նետուեց դէպի նա, գրկեց, համբուրեց և հեղեղեց նրան իր անվերջ հարցումներով. թէ ինչպէս է ալժմ ձեր մօր առողջութիւնը, ուր էք տեղափոխուել, ինչպէս տեղափոխուեցիք, ինչպէս ձեր իրեղէններն ազատեցիք, ով է ձեզ բարերարը, և այլն:

Օրիորդը մնացել էր սառած, անհամարձակ

կերպով նայում էր սրճարանապետուհուն և չէր իմանում, ինչ պատասխանել:

Նա հասկացաւ, որ այդ բոլոր հարցումներին միանգամից պատասխանել շատ դժուար էր, ուստի և սկսեց հերթով հարցուփորձ անել: Աղջիկը պատմեց այն բոլորը, ինչ որ գիտէր և ինչ որ տեղի էր ունեցել, սակայն այն հարցման, թէ ո՞վ է եղել այդ բարի մարդը, — նա պատասխանեց, որ չէ ճանաչում, իսկ նրան՝ իրեն հարցնել չէր կարելի, որովհետեւ նա արգելում էր այդ:

Անկասկած, նրա կողմից այդ մեծ ազնու-թիւն է, — ասաց սրճարանապետուհին, սակայն և այնպէս ցանկալի էր իմանալ նրա անունը: Ապա մի լաւ մտածիր, նրան տեսած չունէս այստեղ այն ժամանակ, երբ դու խօսում էիր ձեր դժբաղ-դուլութեան մասին:

— Ոչ, չեմ տեսել, բայց, ինչպէս երևում է, նա այստեղ ամեն բան լսել է, որովհետեւ իմ ետեւից իսկոյն մեր սենեակը մտաւ և ամեն բան արդէն իմանում էր:

Սրճարանապետուհին կանչեց իր բոլոր ծառաներին և մէկ-մէկ հարցուփորձ արեց, թէ այդ օրը սրճարանում ո՞վ կար: Սակայն ոչ ոք չկարողացաւ նրան ճիշտ պատասխան տալ, որովհետեւ շատ մարդ էրեղել և դժուար էր ամենքին մտաբերել:

Աղջիկը՝ պարտաւորուած էր նորից մի առ մի

ամեն ինչ պատմել և երբ հասաւ այնտեղ, որ եղբորը տուել են նշանաւոր մի փորագրչի մօտ սովորելու, — սրճարանապետուհին կատարելապէս հիացաւ, ամեն կերպ գովեց այդ մարդու վարմունքն և աւելի ևս սաստիկ ցանկացաւ նրա ո՞վ լինելն իմանալ:

Երկար մտածելուց յետոյ, վերջապէս, հետեւեալ հնարքը գործ դրեց, նա դարձաւ օրիորդին ու ասաց. «Գնա՛ տուն ու մօրդ ասա, որ նա քեզ թոյլ տայ ինձ մօտ մնալու այնքան ժամանակ, մինչև որ կարողանանք ձեր բարերարի անունն իմանալ. առաջմ ինձ ասա, եթէ տեսնես, կարո՞ղ ես դու նրան ճանաչել:

— Օ՛, կճանաչեմ, անպատճառ կճանաչեմ, նրա դէմքի գծերը սրտիս մէջ շատ խոր են տպաւորուել:

— Շատ լաւ, որ այդպէս է, շուտով գնա՛ տուն ու խնդրիր մօրիցդ: Դու այստեղ ոչ մի գործ կատարելու չես, պէտք է իմ գրասեղանիս մօտ նստես և նայես մտնող-դուրս եկողներին, անշուշտ նրանց մէջ կ'լինի նաև այդ անձանօթը:

Բերանփէն, սակայն, այլևս սրճարան չէր յաճախում, նա իր ամբողջ դրամը խարջել էր և մի բաժակ սուրճ խմելու անգամ մօտը փող չէր մնացել: Նա սիրով յանձն էր առել աւելի շուտ այդ շուտաւթիւնից լեռ կենալ, քան թէ պարտքով սուրճ խմել:

Անցաւ միքանի օր. նրա բացակայութիւնը զարմացնում ու մտահոգութիւն էր պատճառում սրճարանապետուհուն: Նա դիպուածով պատահեց Բերանժէի ընկերներից մէկին և նրանից հարցրեց, թէ արդեօք Բերանժէն հիւանդ չէր:

— Ամենին, ընդհակառակը, սովորականից շատ աւելի առողջ է, միայն թէ ինչ-որ գործերով սաստիկ զբաղուած է և, բացի դրանից, մի՞թէ նա կարող է ամբողջ ժամանակը սրճարանում նստել:

— Բայց ինչո՞վ է զբաղուած, ահա մօտ մի շաբաթ է ես նրան չեմ տեսել:

— Չգիտեմ, թէ ինչով է զբաղուած, բայց երբ հետը խօսում ես, նա սկսում է մի տեսակ տարօրինակ կերպով ժպտել, այդ ժամանակ մարդ ակամայից ստիպուած է լինում այլևս ոչինչ չհարցնել:

— Տարօրինակ է, — բացականչեց սրճարանապետուհին, — եթէ նա իր սուրճն ու լրագրներն անգամ մոռացել է, այդ նշանակում է, թէ նա որևէիցէ բանով սաստիկ զբաղուած է:

— Նիշտ ասած, դժուար է ինձ ձեր ենթադրութիւնների մասին վճիռ արձակել, դուք ինքներդ հարցութիւն դրէք, երբ տեսնելու լինէք նրան: Ես միայն ասլքանը գիտեմ, որ եթէ նա զբաղուած է, անպատճառ մի բարի բանով է զբաղուած, և ոչ չար. վերջիվերջոյ կտեսնէք, որ սուսուփուս մէկին

օգնելիս է եղել, ինչպէս առհասարակ ամեն ժամանակ:

Նրանց խօսակցութիւնը վերջացաւ, սակայն, սրճարանապետուհին շարունակում էր զբաղուել միևնույն մտքով և նրան թւում էր, թէ գաղտնիքի հանգուցն արդէն լուծել է: Նա շտապով մօտեցաւ օրիորդին և հարցրեց.

— Սիրելի Ամալիա, ասա ինձ, ձեր բարերարն երիտասարդ հօ՞ չէր:

— Ոչ, երիտասարդ չէր:

— Նա լիք-լիք մարդ էր, թէ՞ նիհար:

— Այո՛, նա լիք-լիք մարդ էր:

— Նրա մազերը բաւական երկայն ու դէպի ետև հօ՞ չէին սանդրուած:

— Այո՛, այո՛, դէպի ետև էին սանդրուած:

— Նրա վերարկուն կամ սիւրտուկը թնջ գոյնի էր:

— Լաւ չեմ նկատել, բայց կարծեմ, մթադոյն էր:

— Նա ձեռքին գաւազան ունէր:

— Այո՛, թեթև գաւազան, որ խաղողի որթիցն էր շինուած:

— Իսկ թնջ կասես ձայնի մասին:

— Ո՛հ, նա հրաշալի ձայն ունէր, այնքան փաղաքշական, այնքան բարի, որ բաւական է, մարդ մի անգամ լսի, երբէք էլ չի մոռանալ:

— Խիստ բարի: Նա հէնց ինքն է, նա հէնց ինքն է: Սպասիր, մենք նրան կգտնենք, հիմա արդէն հասկանում եմ, թէ նա ո՞վ կարող է եղած լինել:

Անցաւ մի քանի օր, Բերանժէն դարձեալ սրճարանում չէր երևում: Վերջապէս, մի անգամ նա մտաւ և աննկատելի կերպով նստեց իր սովորական տեղը: Սրճարանապետուհին նրան նկատեց այն ժամանակ, երբ նա սուրճ էր խմում և լրագիր կարդում: Նրա սիրտը թունդ ելաւ և, դառնալով օրիորդին, ասաց.

— Տեսնո՞ւմ ես այդ պարոնին, որ մէջքը մեզ տուած նստած է. կատուի նման զգուշ ու կամայ անցիր սենեակի միւս կողմն ու նայիր նրա դէմքին, արդեօք դա չէ՞ ձեզ բարերարողը, բայց աշխատիր, զգուշ լինել, որպէսզի նա չնկատի քեզ:

Օրիորդը կատարեց սրճարանապետուհու հրամանը, գաղտագողի անցաւ սենեակի նշանակուած տեղն և վերադարձաւ ուրախութիւնից կարմրած դէմքով ու, արդէն հեռուից գլուխը շարժելով, մօտենալուն պէս մրմնջեց.

— Նա է, նա, նա ինքն է: Ա՛հ, որքան ուզում էի մօտենալ նրան ու ձեռքը համբուրել: Ես նրան վաղուց է, չէի տեսել. նա այլևս մեր տուն չէ գալիս:

— Փոքր ինչ համբերութիւն ունեցիր: Այժմ գնա՛ տուն, ասա՛ մօրդ, որ վաղը կգամ նրա մօտ

և կասեմ, թէ ո՞վ էր ձեր ազատարարը: Իսկ դու վաղն առաւօտեան շուտ արի այստեղ, քեզ համար մի գործ կգտնեմ:

Աղջիկը հեռացաւ և սրճարանից դուրս գալուց առաջ, մի-երկու անգամ նայեց Բերանժէին. նա ցաւում էր, որ ստիպուած էր այդքան շուտով նրանից բաժանուել: Բերանժէն լրագիրը կարգաց, խմեց սուրճը, վճարեց ու դուրս եկաւ: Սրճարանապետուհին նրան գլուխ տուեց առանձին հաճոյքով ու բարեկամաբար, սակայն նրա ներսը զգացմունքներն այն աստիճան եռում էին, որ նա չէր համարձակում նրա հետ խօսքի բռնուել՝ որպէսզի իր գաղտնիքը հրապարակ հանած չլինի: Նա սաստիկ ցանկանում էր որևիցէ կերպով բանաստեղծին ցոյց տալ, որ իրեն արդէն յայտնի է նրա այնքան ազնիւ վերաբերմունքն ու միանգամայն զգացակից է նրան, բայց նա ուզում էր այդ արած լինել, որքան կարելի է, քաղաքավարի կերպով: Նա ամբողջ գիշերը չքնեց, շարունակ մտածում էր, սակայն իր կազմած ծրագրերից ոչ մէկին էլ հաւան չէր կենում: Վերջապէս կանգ առաւ մի մտքի վրայ ու իրեն այնպէս էր թւում, թէ իր կազմած այդ ծրագիրը լաւ էր:

Առաւօտեան նա վերկացաւ շատ վաղ, ինքն անձամբ գնաց մի ծաղկավաճառ կնոջ մօտ և պատուիրեց դափնեայ թերթերից, վարդերից ու հաճարի հասկերից իր համար պատրաստել մի շատ

գեղեցիկ պատկ, սակայն պայմանով, որ նա մի թէչի պնակից աւելի մեծ չլինի: Երբ արգէն պսակը բոլորովին պատրաստ էր, նա հանեց իր սեվրեան բաժակներից ամենալաւը, պսակը դրեց արծաթեայ մատուցարանի վրայ և նրա մէջտեղը՝ մի թերթ ճերմակ թուղթ, որի վրայ դրեց Բերանժէի ամենալաւ բանաստեղծութիւններից երկու երգ: Դրանց մէջ ասուած էր. «Նա խրճիթները մտցնում է երջանկութիւն և պալատներից ձանձրոյթը դուրս վռնում»: Բաժակը դրեց թերթիկի վրայ և ամենը միասին թագցրեց պահարանի մէջ ու սպասեց Բերանժէի լոյս ընկնելուն: Աղջիկը պատկից սենեակի վարագոյրի ետևն անցած նայում էր, որ բանաստեղծը գալուն պէս, վերցնի մատուցարանն և նրան սուրճ տանի:

Բերանժէն չստիպեց իրեն երկար սպասել, սովորական ժամին մտաւ սրճարան և նստաւ իր տեղը: Նրա սովորութիւններն արգէն յայտնի էին, ուստի պատուէր տալու առանձին կարիք չկար: Ծառան յարգանքով լի խոնարհութեամբ նրան բերեց օրուայ լրագրները:

Ահա բերին նրան Էւ սուրճը: Բերանժէն նայեց, ուղեց սրճի բաժակը վերցնել, այդ րոպէին նրա առաջ կոնգնած էր Ամալիան ուրախ գուարթ փայլատակող աչքերով և իր դողդոջուն ձեռքերում բռնած ունէր մատուցարանը պսակակիր բաժակով, օրիորդի ետևը կանգնած էր սրճարանա-

պետուհին ծիծաղադէմ: Բերանժէն արգէն կռահում էր, որ իր գաղտնիքն երևան է եկել. նա ինքն իրեն կորցրել էր, չէր իմանում, ինչ ասի: Նրա հայեացքն ուստոստում էր բաժակից աղջկայ, աղջկանից սրճարանապետուհու վրայ: Վերջինս մատուցեց նրան սուրճն և, բաժակի տակից հանելով թուղթը, տուեց նրան: Այլևս ոչ մի կասկած չէր մնում: Դէպի նա քաղաքավարի ձևի տակ արտայայտուած երախտագիտական այդ զգացումները նրա սիրտը յուզեցին: Նա վերցրեց պսակն ու դրեց իր կրծքի վրայ և, սիւրտուկը կոճկելով, ասաց.

— Շնորհակալ եմ ձեզանից, բայց, ճիշտն ասած, այդպիսի երախտագիտական ցոյցերի արժանի չեմ: Այս պսակը պէտք է պահեմ և կտակիս մէջ գրեմ, որ մեռած ժամանակ դնեն սառած կրծքիս վրայ: Իսկ այժմ, ես ձեզանից խնդրում եմ խօսք տուէք ինձ, որ սրանից յետոյ, այդ բանի մասին չպէտք է խօսէք ո՛չ ինձ և ո՛չ էլ ուրիշի հետ. իմ ցանկութիւնս այն է, որ այդ անցքը գաղտնի մնայ ամենքից: Իմ արժանիքից շատ աւելի բարձր գնահատեցիք իմ մատուցած ծառայութիւնս, և եթէ այդ մասին դարձեալ շարունակեն խօսել, այն ժամանակ ես պարտաւորուած կլինեմ հետ կենալ այլևս ձեր սրճարանը յաճախելու բաւականութիւնից ու այդ նպատակի համար ընտրել հեռաւոր, խուլ մի անկիւն, ուր ինձ չեն ճանաչում:

— Ձեզ խօսք եմ տալիս, որ ձեր կեանքի այդ ամենաազնիւ վարմունքը կմնայ ինձ մօտ գաղտնիք և ոչ ոք չի իմանալ,—ասաց սրճարանապետուհին։ Նա այնքան արագ համբուրեց իր պաշտելի բանաստեղծի ձեռքը, որ նա ժամանակ չունեցաւ խլել նրանից։ Ոտքի ելաւ, բարեկամաբար գրկեց սրճարանապետուհուն, ապա օրիորդին, համբուրեց նրա ճակատն ու կրկին անգամ շնորհակալութիւն յայտնեց այն բաւականութեան համար, որ նրանք պատճառել էին իրեն։

Ինչպէս երևում է, սրճարանապետուհին Բերանժէին իր տուած խօսքի կատարեալ տէրը չեղաւ, որովհետեւ մարդիկ հնարաւորութիւն ունեցան նրա կեանքի այդ անցքին տեղեկանալու ու մեծ բաւականութեամբ պատմեցին ուրիշներին։



ԲԱՅՐՈՆ ՈՒ ԻՐ ԶՈՒՆԸ

Անգլիայի ամենամեծ բանաստեղծներից մինը՝ Բայրոն ծնուել է Լոնդոնում, 1788 թուին։ Նրան անուանում էին Գէորգ Գորգոն Բայրոն։ Մանկութեան հէնց առաջին օրերից յայտնի եղաւ, որ նա խիստ բարի ու սիրալիր բնաւորութեան տէր մի անձնաւորութիւն էր, սակայն միևնույն ժամանակ սաստիկ դիւրագրգիռ։ Նա ոչ ոքից ամենափոքր նկատողութիւն անգամ չէր տանում և այդ պատճառով էլ յաճախ կռոււմ էր իր դայեակի հետ, որ շոտլանդացի պառաւ մի կին էր։

Բայրոնին բաւական երկար ժամանակ հազցնում էին կանացի հագուստ, ինչպէս առհասարակ վարւում են փոքրահասակ երեխաների հետ։ Սակայն նա իր աշխույժ բնաւորութեան պատճառով սաստիկ անզգոյշ էր և շուտ-շուտ պատառտում ու կեղտոտում էր իր հագուստները։ Մի անգամ խաղի ժամանակ նա պատառտեւ էր իր հագուստը, որ բոլորովին նոր ու առաջին անգամ էր հագել։ Դայեակը յանդիմանեց նրան այդ արամունքի համար ու տխուր ձայնով ասաց.

— Այ, ախ, ինչպէս կարելի է հազուստն այդպէս ճշտել, ամօթ է քեզ, ամօթ, դու լաւ երեխայ չես:

Բայրոնը կարմրեց, երկու ձեռքով բռնեց հազուստի օձիքից և վերից վար պատռեց այն մինչև փեշերը:

Նա ինքն էլ շատ լաւ հասկացաւ, որ իր արածը շատ անվայել վարմունք էր. գլուխը կախեց և քարացածի նման կանգնեց սենեակի մէջտեղում և սկսեց հանդարտօրէն յանդիմանել ու կշտամբել նախ իր դայեակին, ապա՝ մօրը:

Բայրոնը սաստիկ սիրում էր իր դայեակին, որը կոչւում էր Մայ-Գրէյ: Երբեմն ամբողջ ժամերով նստում էր նրա կողքին հանգիստ և ականջ դնում նրա արած պատմութիւններին անցեալ ժամանակների մասին: Մայ-Գրէյի հայրենիքը՝ Շոտլանդիան հին ժամանակներն անկախ մի երկիր էր, որի լեռնոտ մասերում ապրում էին պատերազմասէր ու անձնավստահ մարդիկ: Նրանք շարունակ կռուի մէջ էին իրենց դրացիների հետ, և այդ պատճառով էլ ժողովրդական աւանդութիւնների մէջ պահուած էին բազմաթիւ երգեր ու հեքեաթներ շոտլանդական լեռնեցիների արշաւանքների ու տուած ճակատամարտերի մասին: Մայ-Գրէյն իբրև իսկական շոտլանդուհի այդ ժամանակների մասին գիտէր շատ պատմութիւններ, որոնք հետզհետէ պատմում էր իր սանիկին:

Բայրոնը չէր պառկում քնելու, մինչև որ դայեակը նրա համար չերգէր ժողովրդական որևիցէ մի երգ կամ պատմութիւն չպատմէր:

Այդ պատմութիւններից մանուկն, նախ քան տեսնելը, արդէն ծանօթ էր այդ լեռներին: Բայրոնի մայրն աղքատ էր և երեխան հազիւ չորս տարեկան էր, որ նա Լոնդոնից տեղափոխուեց Շոտլանդիայի Աբերդին քաղաքը, ուր Բայրոն ապրեց մինչև տասնեմէկ տարեկան հասակը, այսինքն մինչև ուսումնարան մտնելը:

Բայրոնը շատ սիրուն երեխայ էր, գեղեցիկ ու իմաստալից աչքերով, շէկ ու խոպուպիք մազերով: Նրան հազցնում էին շոտլանդացի լեռնեցու հազուստ, այսինքն, կարճ, վանդականկար շրջազգեստ (IOCKA), ծնկները բաց և կարճ գուլպաների վրա հագած ունէր կօշիկներ: Գլխին դնում էր շոտլանդական գլխարկ, արծուի փետրով զարդարուած: Այդ հազուստը նրան տալիս էր աւելի ևս գեղեցիկ տեսք: Այս բոլորով հանդերձ, նա ծննդից ի վեր ունէր մարմնական խոշոր պակասութիւն. նրա ոտքը վնասուած էր, նրան երկար բժշկել էին, որի պատճառով կրում էր զանազան կապանքներ (ՃԱՆԴԱՋԵՆ) ու մեքենաներ, սակայն հնար չէր եղել երեխայի ոտքն ուղղել, և նա իր ամբողջ կեանքի ընթացքում մնաց կաղ:

Նոյն իսկ մանկական հասակում նա յաճախ զգում էր մարմնական այդ պակասութեան ամբողջ

անախորժութիւնը: Նա չէր կարող ուրիշ երեխաների նման երկար ու արագ վազել և, որ ամենից վատն էր, երբեմն նա իր ականջով իսկ լսում էր, որ իր մասին ասում էին. «Բայրօնը շատ սիրուն երեխայ է, բայց ափսոս որ մի ոտքը կաղ է»:

Այդ խօսքերի ժամանակ նա կարմրում էր, աչքերը ցած էր ձգում և յաճախ սաստիկ բարկանում: Այդ պահասութեան գիտակցութիւնը նրան դարձրեց անմարդամօտ: Նա յաճախ ամբողջ ժամերով խաղում էր մէնակ, իսկ երբ փոքր ինչ մեծացաւ, հեռանում էր դաշտը, անտառն ու լեռները և միայնակ թափառում էր այդ տեղերում: Նա սիրում էր լեռնական բնութիւնն և հասակն առած ժամանակ հիացմունքով էր խօսում իր այդ զբօսանքների մասին: Շնորհիւ սարերի միջով ձգուած դժուարին ու նեղ շաւիղների, նա վարժուեց երկարատեւ մանգալու և, հակառակ ոտքի վնասուած լինելուն, ամրապնդուեց ու դարձաւ աւելի համարձակ և անձնավստահ:

Երբ նրա ութերորդ տարին լրացաւ, նրա զբօսանքները սկսեցին դառնալ երկարատեւ, և հետզհետէ աւելի ու աւելի հեռուններն էր գնում իր տնից: Ուսումից ազատ եղած ամբողջ ժամանակը նա անց էր կացնում լեռներում: Նրա մշտական ընկերն էր իր խոշոր շունը՝ Ռայլֆը: Ռայլֆը սաստիկ ուժեղ ու կատաղի էր, սակայն Բայրօնի վերաբերմամբ՝ միանգամայն հնազանդ, սիրում էր

իր փոքրիկ տիրոջն և ամեն ինչ պատրաստ էր պատառոտելու, ով որ յանդգնէր երեխային դիպչել և կամ որևիցէ վիրաւորանք հասցնել նրան:

Բայրօնը նույնպէս սիրում էր Ռայլֆին, ամեն օր նա ինքն էր կերակրում նրան. նրա համար տախտակի կտորներից բոյն էր շինել, յաճախ ինքն էլ նրա հետ մտնելով, երկար ժամանակ մնում էր այդտեղ: Լեռնական զբօսանքների ժամանակ Ռայլֆը միշտ էլ ուղեկցում էր փոքրիկ Բայրօնին: Առաջին նշանը բաւական էր, և շունը դուրս ցալթփելով իր բոյնից, հետևում էր նրան դէպի լեռները:

Մի անգամ Բայրօնը միտքը դրեց մի մեծ զբօսանք կատարել, և հէնց որ արեգակը ծագեց, նա կամացուկ անկողնից ելաւ, հագնուեց, ոտքերի ծայրերի վրայ դուրս եկաւ պատշգամբ, ձայն տուեց Ռայլֆին և երկուսը միատեղ ուրախ զուարթ ճանապարհ ընկան: Այդ անգամ Բայրօնը ցանկացաւ շատ հեռու գնալ, Դի գետի ափերին գտնուող խիստ գեղազրական տեղերից մէկը, դէպի Զալկերկենդիլ տարածուող սարերի կրճերը: Նրա ցանկութիւնն էր հասնել Դի ջրուէժը, որ յայտնի էր ամբողջ Շոտլանդիայում և ուր մի անգամ արդէն եղել էր իր մօր հետ միասին: Սակայն այդ օրը նա ուզեց մէնակ գնալ այդտեղ:

Ջրուէժ հասնելու համար, նա ստիպուած էր բարձրանալ սաստիկ ողորկ ժայռերի վրայով:

Սկզբում ճանապարհորդութիւնը շարունակուում էր շատ լաջող, Բալրոնը քալում էր եռանդալից, նրան հետևում էր Ռալլֆը, և նրանք համարեա արդէն հասել էին բարձրութեան կատարը, բայց յանկարծ մարախուղը չօրս բոլորը պատեց։

Շուտանդիստում մարախուղ շատ յաճախ է պատահում և երբեմն այն աստիճան թանձր է լինում, որ երկու քալի վրայ ոչինչ կարելի չէ որոշել, բացի զրանից, նա սաստիկ արագ է տարածւում։ Շատ անգամ թէև երկինքը բոլորովին պարզ է, օրը՝ պայծառ, բայց մէկէլ յանկարծ մարախուղ է բարձրանում և ընդամենը մի քանի րոպէի ընթացքում այն աստիճան մթնում է, որ կատարելապէս գիշեր է դառնում և մարդ ոտքերի տակն անգամ չէ կարողանում տեսնել։

Ճիշտ այդ տեսակ մարախուղ մի ակնթարթում ջրջապատեց Բալրոնին և նա մի րոպէ կանգ առաւ, չկարողանալով որոշել, առաջանալ, թէ յետ դառնալ։ Բայց յանկարծ նրա միտքն եկաւ Մայ-Գրէյի կտրիճ լեռնեցիների մասին՝ արած պատմութիւններն և ինքն իրեն ասաց. «մէթէ ես նրանցից պակաս եմ, եղանակն որքան էլ ուզում է վատ լինի, ես էլ կարող եմ լեռներն ի վեր բարձրանալ»։ Նա առաջացաւ մի քանի քալ, սակայն վնասուած ոտքը փաթաթուեց մի թփի, հաւասարակշռութիւնը կորցրեց և, յուսահատական ճիչ արձակելով, վար ընկաւ։ Նա զգում էր, որ գլորւում է դէպի

անդունդ։ Ռալլֆը ցաթքեց դէպի նա և երկուսը միասին անհետացան թանձր մարախուղի մէջ։

Բալրոնի մայրը զարթնեց իր սովորական ժամին, ելաւ անկողնից, հարցովորձ արեց որդու ուր լինելու մասին և Մայ-Գրէյից տեղեկացաւ, որ նա վաղուց արդէն տնից հեռացել էր և թէ զրացիները տեսել էին, որ նա լոյսը բացուած չբացուած Ռալլֆի հետ միասին գնացել էր լեռները զբօսնելու։

Յաճախ էր պատահում, որ Բալրոնն ամբողջ օրով հեռանում էր տնից, և հէնց այդ պատճառով էլ նրա բացակայութիւնը մօրը շատ էլ չանհանգստացրեց։ Ամբողջ օրը նա զբաղուեց իր տնային գործերով, լետոյ հիւր գնաց և, երեկոյեան դէմ տուն գալով, տեսաւ, որ որդին դեռ ևս չէ վերադարձել։ Մայ-Գրէյն արդէն շատ տեղեր ջրջապայել էր, բայց չէր կարողացել նրան գտնել։ Սօր անհանգստութիւնը քանի գնում աւելանում էր և երբ մութը կոխեց ու երեխան չեկաւ, — յուսահատութիւնը բոլորովին պատեց նրան։

Դրացիներն ու քաղաքացիներից շատերը կարեկցեցին անօգնական մօրը, լապտերները վառեցին և ամեն մինը մի կողմ գնաց՝ երեխային փնտռելու։ Լէդի Բալրոնն ու Մայ-Գրէյը ծառայի հետ միասին լապտերները ձեռներին դիմեցին դէպի լեռները ճիշտ այն շաւիղներով, որոնք ամենից աւելի սիրելի էին փոքրիկ Բալրոնին։ Անընդհատ,

բարձրաձայն կանչում էին նրան ու շանն ամեն մէկին իր անունով, սակայն ի պատասխան՝ նրանք լսում էին միայն լեռան տուած արձագանգները, որոնք ժայռերի պատառուածքներում հեծկլտալից սուլցններով սլացող քամին կրկնում ու երեքկնում էր աղիողորմ ձայնով, և դրանց խառնում էր աղմուկին այն ջրուէթների, որոնք ամեն քայլափոխում կարելի է պատահել այդ տեղերում:

Միքանի ժամ շարունակ ապարդիւն փնտռելուց յետոյ, լէդի Բայրոն, հոգեկան տանջանքից ու արագ քայլելուց յոգնած ու հալումաշ եղած, վերադարձաւ տուն: Նա լոյս ունէր, որ որդին արդէն վերադարձած կլինի, սակայն սխալում էր: Վերադարձան նմանապէս դրացիներն ու ծանօթները, իրենց հետ բերելով այն տխուր լուրը, թէ չեն գտել ո՛չ փոքրիկ Գէորգին և ո՛չ էլ նրա շանը: Նրանք երկուսն էլ կորել, անհետացել էին: Խեղճ մայրն ամբողջ գիշերն անցկացրեց լացով ու աղօթքով:

Առաւօտեան, հէնց որ լոյսը սկսեց բացուել, ամենքն էլ տնից դուրս եկան, դիմեցին լեռները կրկին փնտռելու: Մի մասը գնաց դէպի ծովը, մտաբերելով, որ ուրիշ անգամ նրան դարձեալ այդ տեղերումն էին գտել: Այն անգամ էլ ինքնագլուխ, առանց մէկին իմաց տալու, հեռացել էր տնից. նրան երկար փնտռել էին ու չէին կարողացել գտնել: Ծովեզրեայ ճահիճներից մէկի մօ-

տով պատահամբ կառքով անցած ժամանակ, Մայ-Գրէի ծանօթներից մէկի ականջին հասել էր ինչ-որ երեխայի յուսահատական աղաղակներ, նա իսկայն մօտեցել էր ճահճին և նրա մէջտեղում տեսել էր փոքրիկ Գէորգին, որը մինչև գօտիկը խրուել մնացել էր տղմի մէջ ու ոչ մի կերպ չէր կարողանում ազատուել այնտեղից: Կառքի ձայնը լսելուն պէս, իր մասին լուր տուած լինելու համար, նա սկսել էր գոռալ և դրանով էլ կարողացել էր ազատուել: Այդ դէպքը միտք բերելով, Բայրոնին փնտռելու համար, նրանց մի մասը գնաց դէպի լեռները, իսկ միւս մասը՝ դէպի ճախճախուտները: Լեռներում ու ճահճների եզերքներում ամեն մի ընդէ Գէորգին կանչում էին բարձրաձայն, սակայն ոչ ոք չէր պատասխանում նրանց:

Լէդի Բայրոնի տանը մնացել էր միայն նրա պատանի հովիւը: Նա կանգնած էր դարբասի առաջ և նայում էր անցող-դարձողին: Յանկարճ նկատում է Ռայլֆին, որ վազում էր դէպի դուռը բոլորովին յոգնած ու լեզուն դուրս ձգած: Հովիւը նետում է դէպի շունը, կանչում է իր մօտ, սակայն շունը առանց ուշադրութիւն դարձնելու, անցնում է նրա մօտով և դիմում ուղղակի դէպի խոհանոց: Հովիւը վազում է նրա ետևից և ասում. «Հ՛ը, սիրելի բարեկամս, շատ քաղցած ես երևում, այս ընդէիս քեզ կերակրեմ»: Հացի կող-

քից բաւական խոշոր կտոր կտրելով, տալիս է շանն ու տսում: Շառ կեր, քեզ հալալ լինի, միայն թէ ասա, ո՛ւր է գտնւում մեր փոքրիկ տէրը. տեսնես, թէ ինչպէս են նրան փնտռում»:

Շունը վերցնում է հացի կտորն և, փոխանակ ուտելու, պոչն ոլորում ու դուրս է փախչում: Հովիւը մի քիչ տեղ վազում է նրա ետևից ձայն տալիս, կանչում է նրան իր անունով, բայց շունը, առանց կանգ առնելու, նոյն իսկ առանց լետ նայելու, բոսկապէս անյայտանում է նրա աչքից:

Մինչդեռ լէզի Բայրոնը գեռ շարունակում էր փնտռել իր երեխային: Նրա ոտները ջարդ ու փշուր էին եղել սուր քարերից, վերջին ծայր յոգնած և անկարող այլևս ոտքի վրայ կանգնելու, տրտում տխուր վերադառնում է տուն: Մայ-Գրէյի ձայնը բոլորովին կտրուել էր ամբողջ օրը բղաւելուց, շատ լաց լինելուց նրա աչքերն ուռել էին, սակայն ոչ մէկն և ոչ էլ միւսն ոչ մի հետևանքի չէին հասել: Երկուսն էլ վերադարձել էին տուն, որպէսզի փոքր ինչ հանգստանան ու կազդուրուեն ու նորից գնան երեխային փնտռելու:

Պատանի հովիւը, կանգնած դարբասի առաջ, նրանց պատմեց Ռալֆի երևան գալու և հացը բերանին անմիջապէս նորից անյայտանալու մասին:

— Ուրեմն, շունն ողջ է, — բացականչեց լէզի Բայրոնը:

— Դուցէ Գէորգս էլ կենդանի է: Աստուած իմ, վատ չի լինի, եթէ նորից երթամ նրան փնտռելու, — և նա իսկոյն ևեթ պատրաստուեց գնալու, սակայն նրա սպառնալիքն ուժերը դաւաճանեցին նրան և նա բոլորովին անզգայացած ընկաւ գետին: Մայ-Գրէյը, գլուխը կորցրած, վերցրեց, տարաւ սենեակ, պառկեցրեց անկողնի վրայ և ամեն ջանք գործ դրեց նրան ուշքի բերելու: Ճիշտ այդ րոպէին Ռալֆը նորից լոյս ընկաւ, և միայն շան երևալը, ուրախ հաջոցն ու Մայ-Գրէյի ցնծալից բացականչութիւնը բաւական եղաւ ուշաթափ եղած մօրն ուշքի բերելու: Նա նետուեց գէպի Ռալֆը, շուրջ նրան, գլուխը սեղմեց իր կրծքին և բացականչեց.

— Սիրելի Ռալֆս, ասա՛ ինձ, որտե՞ղ է Գէորգը, ո՛ւր է նա:

Ռալֆը չկարողացաւ պատասխանել, սակայն ուրախութիւնը փայլում էր նրա իմաստալից աչքերի մէջ, և նա շարժեց պոչը, կարծես, շնորհաւորել ուզելով:

Լէզի Բայրոնը հրամայեց կերակուր ու հաց բերել և ինքն իր ձեռքով կերակրեց Ռալֆին: Նա ագահաբար միքանի կուժ լակեց, բայց իսկոյն դադարեց ուտելուց և նորից սկսեց պոչը շարժել և ուշադրութեամբ նայել հացին:

— Սուպ չես ուզում, ուրեմն, ի՞նչ ես ուզում, հաց:

Նա Ռալլֆին տուեց մի կտոր հաց, որը շու-
նը համարեա խլեց նրա ձեռքից և քիչ էր մնում
դուրս փախչէր, բայց Լէզի Բայրօնը կանչեց նրան
և նա իսկոյն կանգ առաւ:

— Ես գնում եմ նրա ետևից, երևի, նա
կարող կլինի ինձ առաջնորդել Գէորգիս մօտ: Այո՛,
նա ողջ է, նա ողջ է:

Լէզի Բայրօնը վեր թռաւ տեղից և գնաց:
Ռալլֆը նկատելուն պէս, որ նա հետևում է
իրեն, թռչկոտելով դարձաւ դէպի նա և փաթաթ-
ուեց նրա ոտքերին, կարծես, ուզելով շնորհա-
կալուծիւն յայտնել այն մասին, որ իր տիրուհին
հետևում էր իրեն: Շան թռչկոտած ժամանակ,
լէզի Բայրօնը նկատեց, որ նրա վզկապին կապ-
ուած է մի թղթի կտոր: Նա սրտատրոփ բռնեց
շան վզկապը, բաց արեց տոմսակը և տեսաւ, որ
նամակն իր որդուցն էր:

«Սիրելի մայրիկ, հանգիստ եղիր, ես դեռ
ողջ եմ: Երէկ առաւօտեան դուրս եկայ լեռները
զբօսնելու, յանկարծ մարախուղը կոխեց, ես ճա-
նապարհս շարունակեցի, ոտքս փաթաթուեց թփին
և, ինքս էլ չգիտեմ, թէ ինչպէս գլորուեցի ան-
դունդը: Ես ջարդուփշուր կլինէի, եթէ Ռալլֆը
հագուստիցս չբռնէր և ես, նորից ինչ-որ մի բանի
կառչելով, մնացի անդունդի բերնին կախուած
դրուծեան մէջ, երկու ձեռքով պինդ բռնելով մի

ուրիշ բանից: Երբ մարախուղն անցաւ ու ես կա-
րող եղայ չորս կողմս դիտել, տեսայ որ մենք կա-
խուած ենք սոսկալի անդունդի բերնին: Ես ուզե-
ցի նորից վեր բարձրանալ, բայց չկարողացայ,
ուստի թփերից ու քարերից բռնելով, հազիւ
մի կերպ իջայ խորխորատի յատակը: Այժմ հէնց
այստեղ էլ գտնուում եմ և չեմ կարողանում դուրս
գալ: Սմբողջ գիշերը լացել եմ. գիտեմ, որ իմ մա-
սին անհանգիստ ես լինում: Ես մըսում էի, սա-
կայն Ռալլֆը տաքացրեց ինձ: Ես էլ, Ռալլֆն էլ
այսօր սաստիկ քաղցածեցինք և ուտել ուզեցինք.
մէկէլ յանկարծ նա վեր ցաթքեց, մագլցեց ան-
դունդից դէպի վեր. նա ինձնից աւելի ճարպիկ
գտնուեց: Ես կարծեցի, թէ նա ինձ բոլորովին
թողեց, սաստիկ լաց եղայ, սակայն հազիւ մի
ժամ էր անցել, որ իմ սիրելի Ռալլֆը վերադար-
ձաւ ինձ մօտ, բերանում բռնած մի կտոր հաց:
Հացը տեսնելուս պէս, ես հասկացայ, որ նա տանն
եղել է, դա մեր հացիցն էր: Հացի կտորը մեր
մէջ հաւասար բաժանեցինք, բայց, ինչպէս երևաց,
Ռալլֆին քիչ ընկաւ և նա ուզում էր նորից
դուրս փախչել: Ինձ թուեց է, թէ նա կրկին գա-
լու է Աբերդին, դրպաններս փնտռեցի և գտայ
մի կտոր թուղթ ու մատիտ և ահա գրում եմ այս
տոմսակը՝ քեզ հանգստացնելու համար: Տոմսակս
շան վզնոցին կապելու համար թաշկինակս պատ-
ուեցի: Ներողութիւն եմ խնդրում: Եթէ նամակս

ձեռքդ կանցնի, հետևեցէք Ռալլֆին, նա ձեզ կառաջնորդի ինձ մօտ:

Քո անհնազանդ, բայց զզջացած որդի՝
Գէորգ Բայրոնն:

— Մայրիդէ, Գէորգս կենդանի է: Նա ինձ նամակ է գրել: Շուտ արա, շուտ արա, գնանք նրա մօտ, ազատենք նրան:

Լէզի Բայրոնը, դայտակն ու մշակը հետևեցին Ռալլֆին, որը հացը բերանին բռնած, հանդարտաքալ առաջ էր գնում: Ճանապարհին մայրը նամակը կրկին անգամ կարդաց բարձր ձայնով. կէս ճանապարհին նրանց միացաւ նաև մի լեռնեցի: Մի ժամից կամ փոքր ինչ աւելի նրանք հասան ջրուէժը. Ռալլֆը կանգ առաւ: Անդունդի երկու եզերքն այդտեղ համարեա թէ միանում էր, բայց որքան հեռանում ու խորանում էր, այնքան աւելի էր լայնանում ու անտեսանելի դառնում, ցածանալով դէպի անտեսանելի անդունդի յատակը, ուր փրփրում ու աղմկում էր փոքրիկ հեղեղատը: Այդ տեղի միմիայն տեսքն արդէն սոսկում էր ազդում մարդուն. բաւական էր երեխան այդտեղից ցած գլորուէր, նա ոչ մի դէպքում չէր կարող կենդանի մնալ: Բայց Ռալլֆը մի կողմի վրայ հեռացաւ, փոքր ինչ հեռու, սկսեց հաջել և նետուեց դէպի ցած մի այնպի դառիվայրով, որ միանգամայն անանցանելի էր մարդկային էակի համար, և, շնորհիւ միայն իր մագիլներէ, Ռալլ-

ֆը կարողացաւ սահել դէպի ներքև: Այդտեղ եզերքը փոքր ինչ հեռանում էր ջրուէժից և այնպէս չէր կախուած նրա վրայ, ինչպէս այնտեղ, ուր նրանք առաջին անգամ կանգ էին առել:

Երբ Ռալլֆը սլացաւ դէպի անդունդ, Լէզի Բայրոնը քիչ էր մնացել նետուէր նրա ետևից, բայց լեռնեցին արգելեց և դաժան ձայնով ասաց նրան.

— Ո՛ւր, սպասեցէք: Ի՜նչ, միթէ բաւական չէ արդէն եղած դժբաղդութիւնը, կամենում էք ինքնե՞րդ էլ սպանուէք և երեխային թողնէք որբ: Մայրը կռացաւ ժայռի եզերքին և սկսեց իր բոլոր ոյժով աղիողորմ կերպով կանչել որդուն. նա արձագանգ տուեց մօրը ձայնին: Այդպիսով իմացան նրա ուր լինելը, մնում էր միայն վեր հանել նրան: Լեռնեցին մօտեցաւ ժայռի եզերքին, պառկեց և ուշադրութեամբ նայեց նրա կողերին, և, երկար հետադատելուց լեռոյ, ասաց.

— Ոչ, զառիվայրը չափազանց մեծ է, նրա վրայով իջնել էլի մի կերպ կարելի է ինչպէս սահել է փոքրիկ պարոնը, սակայն նորից վեր բարձրանալու ոչ մի հնար չկայ:

— Որեմն, ինչպէս անել. միթէ նա հէնց այնտեղ էլ պէտք է մեռնի:

— Ոչ, ինչու համար,—պատասխանեց լեռնեցին,—հարկաւոր է նրան դուրս բերել, միայն թէ թոյլ տուէք ինձ, գործը տանել այնպէս, ինչպէս

ես եմ հասկանում, իսկ ինչ վերաբերում է յաջողութեան,—այդ մասին ես երաշխաւորում եմ:

Այդ առաջարկութեան ոչ ոք դէմ չկեցաւ:

— Արա՛ւ այն, ի սէր Աստուծոյ, ինչ որ քո կամքն է,—բացականչեց լէզի Բալրոնը,—միայն թէ ազատիր որդուս:

— Գնա՛ Աբերդին,—ասաց լեռնեցին դառնալով մշակին,—և բեր հաստ չուաններ. որքան շատ լինի, այնքան լաւ. նմանապէս մի մոռանալ հետդ բերել բարակ տեսակներից ևս. գտիր նոյնպէս և ուտելու սննդարար մի բան, միս կամ սուպ, ածա՛ մի ամանի մէջ ու բեր հետդ: Մշակը ափալ-թափալ ճանապարհ ընկաւ, իսկ լեռնեցին ասաց:

— Մեր մշակն ինքը մէնակ պէտք է աշխատի, այդ պատճառով էլ հարկաւոր է նրան առաջուց լաւ կերակրել:

Յետոյ նա մօտեցաւ ժայռի եզերքին, ծռուեց, պառկեց նրա ծայրին և սկսեց խօսակցել երեխայի հետ, որը, լսելով նրա խօսքերը, պատասխանում էր նրան անդնդի խորքից:

— Վիրաւորուած հօ՛ւ չե՞ս:

— Ոչ:

— Դու քեզ ուժեղ ես զգում:

— Կարծեմ:

— Կարո՞ղ ես չուանի վրայով մագլցել:

— Կարող եմ:

— Առայժմ հանգստացիր ու կազդուրուիր:

Տանջալից, սպասողական դրութիւնը տւեց մօտ մի ժամ: Վերջապէս մշակը լոյս ընկաւ, բերելով իր հետ իրեն նման երկու հոգի: Նրանք իրենց հետ ունէին բաւական հաստ պարաններ, բարակ չուաններ, մի մեծ աման սուպ և տաւարի միս:

Միտն ու կերակուրը կապեցին մի թաշկինակի մէջ և բարակ չուաններով բաց թողին անդնդի յատակը:

— Կէր ու կազդուրուիր,—կանչեց լեռնեցին,—իսկ ինքը սկսեց զբաղուել հաստ պարաններով: Որոշ տարածութեամբ պարանների վրայ հանգուցներ կապեց, նրանք միացրեց ծայր ծայրի ու երկարացրեց: Վերջապէս ամեն բան պատրաստ էր: Որպէսզի չուանը ներքև իջած ժամանակ, սուր քարերի զիպչելով, չկտրատուէր, նրա ծայրին կապեց ծանր քար և սկսեց զգուշութեամբ բաց թողնել անդնդի խորը: Յտնկարծ ներքևից լըսուեց Բալրոնի մանկական ձայնը. «չուանը տեղ հասաւ, այս ըոպէիս սկսելու եմ բարձրանալ»:

Չուանն ընկած էր ոլորի զառիվայրի վրայ: Թէև նրա վրայով կարելի էր բարձրանալ և, բարձրանալու զործողութիւնը դիւրացնելու համար, կարելի էր նաև տեղ-տեղ ժայռերի դուրս ցցուած մասերից բռնել, այնուամենայնիւ բաւական դժուարին ու վտանգաւոր մի փորձ էր այդ: Մայրը

ծնկի եկաւ, ձեռքերը ծալեց կրծքին և սկսեց ջերմագին աղօթել որդու անփորձ ազատուելու համար: Մշակները մի ցից խփեցին գետնին, նրան փաթաթեցին չուանի ծալրը, որպէսզի չչարժուի, իսկ իրենք երկուսով դեռ ևս բռնած էին այն: Լեռնեցին լարուած ուշադրութեամբ նայում էր անդնդի խորը, որտեղից արդէն սկսեց երեխայի գլուխն երևել, բայց նա մեռելի նման գունատուած էր, իրեն վատ էր զգում, ձեռքերը բաց ընկան չուանից և նա կրկին կգլորուէր անգունդը, եթէ այդ րոպէին լեռնեցին չբռնէր նրա հագուստից ու դուրս չքաշէր քարաժայռի եզերքը: Երեսան ուշադնաց եղաւ: Նրան նստեցրին խոտի վրայ, մայրն իր արտասուքներով թրջեց նրա քունքերը, համբուրեց, իր շնչով տաքացրեց նրան, կրծքին սեղմեց և ամեն կերպ աշխատում էր ուշքի բերել: Ռալլֆը օգնում էր իր տիրուհուն ինչով որ կարող էր, լիզում էր Գէորգի ձեռքերն ու հաջում: Երկար ժամանակ անցնելուց յետոյ, Գէորգը վերջապէս աչքերը բացեց, բայց այնքան թույլ էր, որ խօսել չէր կարողանում: Երբ փոքր ինչ ոյժի եկաւ, արտասուքն աչքերին ներողութիւն խնդրեց մօրից: Նրան գրկեցին ու տարին տուն: Չուանի վրայով վեր բարձրանալու համար իր ոյժերի սաստիկ լարումն ու այդ ժամանակ զգացած սոսկումը նրան բոլորովին ուժասպառ էին արել:

Կարճ ժամանակից Բալրոնի բաղդի անիւը դարձաւ: Նրա մօտիկ ազգականներից մինը, այսինքն հօրեղբայրը, որ նշանաւոր ու հարուստ մէկն էր, մեռաւ անգաւակ: Անգլիական օրէնքով հօր մեռնելուց յետոյ, եթէ որդի չունի, նրա ազնուականութեան տիտղոսն ու հարստութիւնն անցնում է ամենամօտ ազգականին: Եւ որովհետեւ Գէորգ Բալրոնը լորդի եղբորորդին էր, այդ սլառճառով հանգուցեալի հարստութիւնն ու տիտղոսն անցաւ նրան: Նա հարկադրուած էր բաժանուել Սբերգինից, նրա սիրելի լեռներից՝ իրենց ջրուէժներով, կրճերով ու քարանձաւներով: Նրան տուին ուսումնարան: Նա թէև այլևս Սբերգին չվերադարձան, սակայն մինչև իր կեանքի վերջը նրա մէջ վառ մնաց Շոտլանդիայի լեռների լիշատակը, որոնց մասին յաճախ խօսում ու նկարագրում էր իր գըրուածներին մէջ:

Ռալլֆն ամբողջ կեանքն անցկացրեց Բալրոնի մօտ և ապրում էր շատ լաւ: Երբ նա ծերութիւնից վերջապէս անդամալուծ դարձաւ, Բալրոնն արդէն հասակն առել էր և դարձել անգլիական պէռ ու նշանաւոր հանգիստացել իր բանաստեղծական գրուածքներով: Ռալլֆի կորուստը նրա սիրտը սաստիկ դառնացրեց և նա ամենքին հաւատացնում էր, որ, այդ շանը կորցնելով, նա զրկուել էր իր ամենահաւատարիմ բարեկամներից մէկից, որը մի ժամանակ փրկել էր նրա կեանքը:

$$\begin{array}{r}
 33 \\
 15 \\
 \hline
 125 \\
 33 \\
 \hline
 455
 \end{array}$$

$$\begin{array}{r}
 34 \\
 15 \\
 \hline
 170 \\
 34 \\
 \hline
 510
 \end{array}$$

$$\begin{array}{r}
 32 \\
 \times 15 \\
 \hline
 160 \\
 32 \\
 \hline
 \end{array}$$

<< Ազգային գրադարան



NL0166241

